

ՄԵՐ ԱՆԿԻՆԵՆ

**ԽՕՍԲ՝
 ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԵՒ
 ԵՐԱՆՏԱԳԻՏՈՒԹԵԱՆ**

ՏՕԳԹ. Ա. ԳԱԶԱՆՃԵԱՆ

«Մեր Անկիւն»-ի նախորդ համարով, գրած էի մի Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան Շրջանի Ա. Դ. Հ. Կուսակցութեան օրկան՝ «Մասիս» շաբաթաթերթի 33-րդ եւ «Մասիս Փոսթ»-ի 3-րդ տարեդարձի մասին: Հոն, ի մէջ այլոց, նաեւ անդրադարձած էի մի Սփիւռքեան պայմաններու տակ լոյս ընծայուող թերթերու շարքին, «Մասիս»-ի դիմագրաւած միջամտեցային նիւթերու եւ բարոյական դժուարութիւններուն մասին, գորս կարելի կը դառնար յարթահարել, շնորհիւ տարուած ու տարուող մնայուն գաղափարաւարտ հաւաքական աշխատանքին եւ մեր համայնքի ընթերցատէր հասարակութեան զօրակցութեան:

Այդ աշխատանքի արգասիքն էր, որ «Մասիս» տօնախմբեց իր 33րդ տարեդարձը, Շաբաթ, Նոյեմբեր 9, 2013-ին, փառաշուքեան կերտոյթ-պարահանդէսով մը, «Արպար» նաշարանի պերնաշուքահիմ մէջ, Պրըպեմ: «Մասիս»-ով խանդավառ բազմահարիւր շարքայիններ, համակիրներ եւ բարեկամներ մասնակցեցան անոր՝ իրարու միջեւ բաժնեկցելով օրուան խորհուրդի պատմառած հպարտութիւնը:

Տօնախմբութեան մասնակցեցները խոստովանեցին ինչ շնորհաւորելու, գնահատելու եւ իրենց անմնացորդ զօրակցութիւնը վերանորոգելու թերթի մը հանդէպ, ինչպիսիք էր «Մասիս», որ այսօր աւելի քան երեք տասնամեակներ կը գտնուի ազգային պահանջատիրական, հայրենիքի ժողովրդական կառոյցներու առաւել գարգացման, հերոսական Արցախի Հանրապետութեան նախաձեռնման, հայապահպանման պայքարի, ազգային միասնութեան գոյատեման, հայ մշակոյթի, դպրութեան եւ լեզուի անադարտ պահպանման եւ տարածման սկզբունքային առողջ դիրքերու վրայ, սկզբունքներ՝ որոնք անվերանայելի հաւատոյ հանգանակը կը կազմէին Ա. Դ. Հ. Մայր Կուսակցութեան:

Այս կապակցութեամբ, մեր ողջոյնի եւ շնորհակալութեան անմնացորդ խօսքն ունիմք մեր հաւատոյ հանգանակին հետ հաշտ մեր պնդող աշխատակիցներուն՝ ինչպէս՝ բանասէր Դոկտ. Տէր Զաւէն Աւագ Քիւնյ. Արգունեանին՝ իր մեծագրական ու բանասիրական ուսումնասիրութիւններով, Պօղոս Լազիսեանին՝ իր առասպելական պատումներով, Գարրիէլ Մոլոյեանին՝ իր շաբաթական թղթակցութիւններով, Ներսէս Պալայեանին՝

Շաբ.ը էջ 19

ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ԽԱՆԴԱՎԱՌ ՏՕՆԱԽՄԲՈՒԹԵԱՄԲ ՆՇՈՒԵՑԱՒ «ՄԱՍԻՍ»Ի 33ՐԴ ՏԱՐԵԴԱՐԶԸ ՕՐՈՒԲԱՆ ՍԵԾԱԳՈՅՆ ՆՈՒԻՐԱՏՈՒՆԵՐՈՒՄ ԵՐ ԵՒ ՏԻԿ. ԹԱԴԵՆՍ ՔԵՐՕՐՕՂԵԱՆ՝ \$10,000 ԵՐ ԵՒ ՏԻԿ. ԱՆԴՐԱՆԻԿ ՊԱՐՏԱՍԱՐԵԱՆ՝ \$5,000



Գրեթէ ավանդուած զարձած է Լոս Անճելոսի հայ մամուլին համար նշել իր հիմնադրութեան տարեդարձը, շրջապատուած հովանաւորներով, աշխատակիցներով եւ ընթերցող-համակիրներով:

Այդպիսին էր «Մասիս» շաբաթաթերթի հիմնադրութեան 33րդ տարեդարձը, որ նշուեցաւ Շաբաթ, Նոյեմբեր 9-ին, 2013, Պրըպեմի վերանորոգուած «Արպար» գեղատեսիլ սրահին մէջ:

Բազմահարիւր ներկաներուն մէջ կը նշմարուէին Արեւմտեան Ամերիկայի նախկին առաջնորդ Գերշ. Տ. Վաչէ Արք. Յովսէփեան, Հայ Կաթողիկէ Համայնքի Ժողովրդապետ՝ Գերպ. Գրիգոր Վրդ. Շահինեան եւ իր օգնականը՝ Անտոն Վրդ. Նորատունկեան, Արթ. Դոկտ. Զաւէն Ա. Քնյ. Արզումանեան, Հայաստանի աւագ հիւպատոսութեան հիւպատոս՝ Եղիա Մանսուրեան եւ բաժնի վարիչ՝ Գայեանէ

Սայաթեան: Հայաստանի Համահայկական Հիմնադրամի Շրջանիս նախագահ Անդրանիկ Պաղտասարեան, Ս.Դ. Հնչակեան Կուսակցութեան Կեդրոնական վարչութեան անդամներ՝ Տօքթ. Համբիկ Սարաֆեան, Վազգէն Խոտանեան եւ Խաչիկ Քէշիշեան, իրենց կանանց հետ, ինչպէս նաեւ շրջանային դեկավարներ, միութենական ներկայացուցիչներ, հովանաւորներ եւ «Մասիս»-ի ընթերցողներ: Հայ մամուլին ներկայ էին «Նոր Օր» շաբաթաթերթի խմբագիր՝ Տէր եւ Տիկ. Յակոբ Մարտիրոսեան, իսկ անգլիատառ շաբաթաթերթերէն՝ «Գալիֆօրնիա Գուրիէր»-ի հրատարակիչ Յարութ Սասունեան եւ «The Armenian Observer»-էն Օշին Քէշիշեան:

Կազմակերպիչ յանձնախումբին անունով կարինէ Տեփոյեան իր բացման խօսքին մէջ ջերմօրէն ողջունեց ներկայ հիւր անձնաւորութիւններն ու ճաշկերոյթի մասնակցները:

«Մասիս»-ի խմբագրապետ Տօքթ. Արշակ Գազանճեան, իր ելոյթին մէջ պարզեց սփիւռքահայ

Շաբ.ը էջ 6

Հայ-Թուրք Յարաբերութեան Նոր Զարգացումներ

ՄԴՀԿ Մամուլի եւ Տեղեկատուութեան Դիւանը կը հարորդէ. Հինգշաբթի, 7 Նոյեմբեր 2013-ին, Պոլսոյ մէջ «Կանաչներ եւ Զախ Ապագայ» կուսակցութեան մէկ յանձնախումբը ժողով մը գումարած է մասնակցութեամբ տարբեր կազմակերպութիւններու եւ անհատներու, որոնք ճանչցած են Հայոց Յեղասպանութիւնը, «Պատմութեան Հետ Առերեսում» վերնագրին տակ, քննարկելու միջնէ 2015 թուականը Հայոց Յեղասպանութեան 100-ամեակին առթիւ տարուելիք աշխատանքներն ու ձեռնարկները: Այս ժողովին մասնակցելու հրաւէր ստացաւ Ս. Դ. Հնչակեան Կուսակցութիւնը:

Այս ուղղութեամբ, ՄԴՀԿ Կեդրոնական վարչութեան արտաքին յարաբերութիւններու մարմինը ժողովականներուն յղեց հետեւեալ նամակը.

«Յարգելի բարեկամներ, Իմացանք որ Պոլսոյ մէջ տեղի պիտի ունենայ «Պատմութեան Հետ Առերեսում» վերնագրին տակ ժողով մը, կազմակերպութեամբ «Կանաչներ եւ Զախ Ապագայ» կուսակցութեան:

Այս առիթով մեր կածիքը այն է, որ պատմական դէպքերը մոռացութեան մատնելը կամ զանոնք չճանչնալ ձեւացնելը սխալ բաներ են: Պատմութեան պէտք է նայիլ

բաց աչքերով: Մեր ընդհանուր պատմութեան մէջ ամենամեծ ցաւ պատճառած աղէտներէն է Հայոց Յեղասպանութիւնը, որուն հարիւրամեակին սեմին ենք այսօր:

Դատապարտել եւ ընդունել սեփական սխալը, զայն լսելի դարձնել հանրութեան՝ յարիւր է միայն համամարդկային բարձր գիտակցութեամբ օժտուած մարդոց: Այս ելակէտէն մեկնած, «Պատմութեան Հետ Առերեսում» վերնագրին տակ գումարուող ժողովը, եւ անոր որոշելիք ձեռնարկները, մուտք մըն են դէպի անցեալի սխալները չկրկնելու, ժողովուրդներու բարեկամութեան եւ տարածաշրջանին մէջ արդարութիւն եւ խաղաղութիւն հիմնելու նպատակին:

Մենք ձեռք կը մեկնենք Ձեզի եւ կ'ողջունենք Ձեր նախաձեռնութիւնները՝ համագործակցութեան մաղթանքներով:»

Ժողովի ավարտին որոշուած է տարբեր ձախ կուսակցութիւններ ընդգրկող ժողովուրդներու ժողովրդավարական Կուսակցութեան (HDP) մասնակցութեամբ ընդլայնուած ժողով մը գումարել եւ աւելի զարգացնել աշխատանքներու ծաւալը: Միտքեր յայտնուած են Հայաստանի մէջ մասնակցելու

Շաբ.ը էջ 5

«Ձորեան» Հիմնարկի Աջակցութեան Շնորհիւ Համաձայնագիր Ստորագրուեցաւ Գանատայի Եւ Հայաստանի Թանգարաններուն միջեւ

Նոյեմբեր 7-ին, Ուիլիսիէի մէջ տեղի ունեցած պաշտօնական արարողութեան մը ընթացքին, Գանատայի Մարդկային Իրաւանց Թանգարանի նախագահ Սթիւարթ Մուրի եւ Հայաստանի Յեղասպանութեան Թանգարանի տնօրէն Հայկ Դէմոյեան ստորագրեցին յատուկ պայմանագիր մը, որ պիտի զարգացնէ համագործակցութիւնը երկու թանգարաններուն միջեւ՝ մարդկային իրաւանց եւ ցողապատմութեան գծով միատեղ ծրագիրներու իրականացման նպատակով:

Գանատայի Մարդկային Իրաւանց Թանգարանի կողմէ այս առթիւ հրապարակուած պաշտօնական հարցազրուակները կու գայ տեղեկացնելու թէ, այս համաձայնագիրը իրականութիւն դարձած է Յեղասպանութեան հարցե-

Շաբ.ը էջ 5

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

ԻՆՉՊԵՍ Է ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆԸ ՀԱՆԴԻՊԵԼՈՒ ԱԼԻԵԻՆ

ԷԻԻՏԱ ԴԱԻԹԵԱՆ

Տարածաշրջան կատարած իրենց հերթական այցի արդիւնքները վերաբերեալ, ինչպէս յայտնի է, ԵԱՀԿ Մինսկի խմբի համաձայնագրերը հանդէս եկան յայտարարութեամբ՝ տեղեկացնելով, որ Հայաստանի ու Ատրպէյճանի նախագահները համաձայնել են հանդիպել Նոյեմբերին՝ շուրջ երկու տարի տեւած դադարից յետոյ:

Համաձայնագրերի յայտարարութեանը հետեւեց պաշտօնական Ուաշինկթոնի արձագանքը: ԱՄՆ Պարաք Օպաման օրերու ուղերձ էր լղել Իլհամ Ալիևին՝ Ատրպէյճանի նախագահի պաշտօնը երրորդ անգամ ստանձնելու կապակցութեամբ: Ուղերձում անդրադառնալով նաև Լեռնային Ղարաբաղի խնդրին՝ Օպաման գրել էր՝ «Մենք պատրաստ ենք մնում համագործակցել ձեզ հետ՝ օգտագործելու համար պատմական շանսը՝ հասնելու Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան խաղաղ կարգաւորմանը բանակցութիւնների ճանապարհով, եւ մենք ողջունում ենք այս ամսուայ վերջին հանդիպելու Ձեր եւ նախագահ Սարգսեանի կայացրած որոշումը»: Նա նաև յաւելել էր՝ «Մենք հաւատարիմ ենք մնում

չարունակելու հարաւային էներգետիկ միջանցքի զարգացման ջանքերը, զարգացնելու բարեփոխումները տնտեսութեան դիւերսիֆիկացման, տարածաշրջանային կաշտութեան եւ անվտանգութեան ամրապնդման համար»:

Հետաքրքրական է, որ վերջին շրջանի՝ զարաբաղեան կարգաւորման ուղղութեամբ ինտենսիւ ջանքերի ֆոնին աշխուժացել է նաև Անքարան: Օրերու, Թուրքիայի արտգործնախարար Ահմեդ Դաւութօղլուն խորհրդարանում կայացած լսումների ժամանակ անդրադարձաւ նաև հայ-թրքական սահմանը բացելու հնարաւորութեանը: «Եթէ մենք կարողանանք ստանալ Ատրպէյճանի համաձայնութիւնը, դա կարող է անակնկալ դառնալ», -ասել է Թուրքիայի ԱԳ նախարարը:

«Մեր պահանջն այն է, որ Հայաստանը ազատի Ղարաբաղը: Այդ հարցում մենք առաջընթաց ենք ակնկալում: Եթէ դա տեղի ունենայ, սահմանները կը բացուեն, կը վերականգնուի երկաթուղային հաղորդակցութիւնը, ինչպէս նաև կը զարգանան յարաբերութիւնները»: «Բայց մենք դա ցանկանում ենք Ատրպէյճանի հետ միասին», - ասել է Դաւութօղլուն: Յայտնի է, որ մօտ ապագայում սպասում է

Թուրքիայի արտգործնախարարի այցելութիւնը Ատրպէյճան:

Վերջերս էլ տեղեկութիւններ շրջանառուեցին, թէ 44 տարի անց վերանորոգում է կարսի նահանգի Սարիղամիշի շրջանի Չաթաք գիւղի եւ Հայաստանին սահմանակից Աքթաքայա շրջանի միջեւ ընկած երկաթուղին, որի երկաթուղիները կազմում է 112 քիլոմետր: Իսկ օրեր առաջ թրքական Hurriyet Daily News թերթը փոխանցեց, թէ Թուրքիան կարող է դիտարկել «Գիւմրի-Կարս» երկաթուղու աշխատանքների վերսկսման հնարաւորութիւնը, եթէ Երեւանն ու Պաքուն առաջընթաց արձանագրեն Ղարաբաղեան հակամարտութեան կարգաւորման հարցում: Այս մասին թերթին յայտնել էին նրա դիւանագիտական աղբիւրները: Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիևը Նոյեմբերի 12-ին մեկնելու է Թուրքիա, տեղեկութիւններ են շրջանառում այն մասին, որ այցի ընթացքում օրակարգում են գտնուելու տարածաշրջանի խաղաղութեան ու կաշտութեան հաստատման «ստեղծագործ գաղափարները»: Դրանցից մէկն առնչւում է Հայաստանի ու Թուրքիայի միջեւ երկաթուղու աշխատանքների վերսկսմանը, ինչ

չը գուզահեռ կախուած է Ղարաբաղեան հակամարտութեան կարգաւորման հարցում առաջընթացի գրանցումից: «Գիւմրի-Կարս» երկաթուղու աշխատանքները դադարեցուել են 1993թ., երբ Թուրքիան փակեց Հայաստանի հետ սահմանը:

Իհարկէ, որեւէ արտառոց բան չկայ, որ Անքարան զարաբաղեան կարգաւորման բանակցային գործընթացում ակտիւացմանը զուգահեռ հերթական անգամ փորձում է չիշեցնել իր մասին: Սա, ինչպէս ասում են, փորձուած եւ աւանդական դարձած մեթոդ է: Պաքուն ու Անքարան, հերթական բանակցութիւններից առաջ ամրացնում են ստրպէյճանական կողմի դիրքերը՝ խօսելով տարբեր «բարիքների» մասին, թէ ինչ կը լինի, եթէ հայկական կողմը համաձայնի գնալ գիշումներին: Այս կեցուածքը նաև բարոյահոգեբանական նշանակութիւն ունի. այն է՝ հայկական կողմի վրայ որոշակի ճնշումներ գործադրել բանակցութիւններից առաջ:

Խնդիրը նրանում է, որ հայկական կողմը գնում է բանակցութիւնների տարածաշրջանում տեղի ունեցած որոշ գործընթացներից յետոյ, եւ դրանք բնաւ էլ յօգուտ հայկական կողմի չեն: Հայաստանը հրաժարուեց ԵՄ Ասոցացման համաձայնագրի նախաստորագրումից, ամիսներ առաջ պարզուեց, որ Հայաստանի ռազմավարական գործընկեր Ռուսաստանը Ատրպէյճանին չորս միլիարդ տոլարի գէնք է վաճառում, հայ-ռուսական յարաբերութիւններում սառնութիւն արձանագրուեց: Հայ-ատրպէյճանական սահմանին, որոշակի լարուածութիւն կայ:

Այնպէս որ՝ Սերժ Սարգսեանը ոչ նախանձելի վիճակում է յայտնուել: Արտաքին քաղաքականութիւնում մարտահրաւէրները յաջորդում են մէկը միւսին: «ՀԱՅԵԼԻ»

«ՈՉ ԻՆՔՆԱԲՈՒՄ» ՑՈՒՑԱՐԱՐՆԵՐԸ

ԱՐԱՄ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ

Օրերս իրենց ցոյցը որոշեցին անել նաև «գծատէրերը» պահանջելով ուղեվարձը դարձնել 200 դրամ: Ես կասկածում եմ նման ցոյցերի «ինքնաբուխ» լինելու մէջ, նախ այն պատճառով, որ նրանք, ովքեր ներկայանում են որպէս «գծատէր», իրականում «proxy»-ի դեր են կատարում, նրանք գիծը «աշխատեցնողներն» են, ոչ թէ տէրերը: Բայց ոչ աշխատեցնողները, ոչ էլ տէրերը չեն կարող ցոյց անել առանց իշխանութիւնների ցուցումի՝ որովհետեւ նրանք կախեալ մարդիկ են:

Դրա վառ ապացոյցն այն է, որ հակառակ բիզնեսի տրամաբանութեան՝ նրանք չեն աշխատում, երբ իշխանութիւնները նրանց հրահանգում են: Իսկ երբ են իշխանութիւններն այդպիսի հրահանգ տալիս, չիշո՞ւմ էք: Այո, այն ժամանակ, երբ վախենում են ընդդիմութեան հանրահաւաքներից եւ ուզում են, որ մարդիկ գան Ազատութեան հրապարակ: Նաև այն ժամանակ, երբ ընտրակաշառք ստացած քաղաքացիներին անվ-

ճար տեղափոխում են ընտրատեղամասեր: Այդ օրերին նրանք չե՞ն մտահոգուում, որ իրենց բիզնեսը տուժելու է: Ինձ թւում է՝ այս պարզ օրինակներից հասկանալի է, որ գծատէրերն իրենց զլխի տէրը չեն:

Գծատէրերի ցոյցը մօտաւորապէս նոյնն է, որ մաքսատան աշխատակիցները ցոյց անեն եւ պահանջեն աւելացնել իրենց կաշառքների «ստավիճեքը», կամ ճանապարհային ոստիկանները ցոյց անեն՝ տեսանկարահանող սարքերը վերացնելու պահանջով, քանի որ այդ դէպքերում չեն կարողանում տուգանքն իրենց գրպանը դնել: Կամ նախարարները գնան Ազատութեան հրապարակ՝ «Պահանջում ենք ատկատը դարձնել 30 տոկոս» պատահառով: Գծատէրերը նոյն համակարգի մի մասն են, նոյն՝ այսպէս ասած, «կանտորան» են՝ վերը թուարկուած քաղաքացիների հետ միասին, եւ նրանց «ընդվզման» պահանջները, ի վերջոյ, նոյն պետական չինովնիկների ձգտումներն են: Դրա բնական ռեակցիան է՝ «եօլա տարէք ձեր՝ արդէն իսկ ոչ քիչ եկամուտներով»:

Ուղեվարձի բարձրացման մասին հնարաւոր կը լինի խօսել միայն այն բանից յետոյ, երբ գծատէրերը (բնականաբար, իսկական գծատէրերը) անեն այնպիսի ներդրումներ, որ հնարաւոր լինի վարորդներին ազատել փող հաւաքելու անհրաժեշտութիւնից եւ, հետեւաբար, «պլանից», եւ երբ բոլոր ուղեւորները կ'երթեւեկեն նստած, ինչպէս որ պահանջում է օրէնքը: Թանկացման մասին պէտք է մտածել ներդրումներից յետոյ, ոչ թէ առաջ: Այսինքն՝ գծատէրերը պէտք է ներդրումներ անեն իրենց՝ արդէն ստացած գերշահոյթներից, ոչ թէ ժողովրդից հաւաքեն այդ փողերը: Որ նման ներդրումները հնարաւոր են, ապացուցում է հետեւեալ փաստը. «Պալաչ» նրբագեղ մականունով գործարարը կիսաքաղաքական-կիսասանձական դրդապատճառներով (Հայաստանում դրանք մշտապէս միահիւսուած են) ներդրումներ արեց եւ գնեց թանկարժէք եւ յարմարաւէտ ատոբուսներ: Գծատէրերը, ուրեմն, փող ունեն՝ պարզապէս «տակներն են դրել»:

«ԱՌԱՒՕՏ»

ՎԱՆԻ ՍԻՆԴՐՈՍԸ

Նկատել էք, որ մեր երկրում կայացուող որոշումների, հասարակական դիրքորոշման հիմքում յաճախ ընկած է մի պարզ, մարդկային թուլութիւն՝ վախը: Մաքսային միութիւն մտնելու կողմակիցների գլխաւոր արգումենտը հենց այդ վախն է. ուստի մի րոպէս կը ճզմի մեզ, ուստի չի հանդուրժի, որ Եւրոպա գնանք. մօտաւորապէս այսպէս են բացատրում Սեպտեմբերի 3-ի որոշումը մեր համաքաղաքացիները:

Բայց այս կոյր վախը միայն ուստի հանդէպ չէ, այլ առհասարակ ամէն ինչի:

Երէկ Ազգային ժողովում ԼՂՀ ճանաչման օրինագծի քննարկման ժամանակ ամենից յաճախ հենց այդ

պատճառաբանութիւնն էր հնչում. պատերազմ կը սկսուի, Ադրբեյջանը չի հանդուրժի մեր այդ որոշումը՝ վախվորած յայտարարում էին մեր պատգամաւորները, որոնք առիժ են կտրում միայն իրենց թաղում՝ իւրայիններով ու թիկնապահներով պաշտպանուած:

Երէկ Ղարաբաղից ժամանած ընկերս, որ երկար ճանապարհից հիմնովին յոգնել էր, բողբոջում էր՝ լաւ, ինչո՞ւ չեն աշխատեցնում էդ օդանաւակայանը, ինչքան կը հեշտանար Ստեփանակերտ մեկնելը: Հարցնում է ու ինքն էլ պատասխանում. վախենում են, մտածում են՝ ադրբեյջանցիները կը ռմբակոծեն:

Այս անտրոշ, անբացատրելի

վախն առաջնորդում է ոչ միայն հասարակական-քաղաքական ուժերին, այլև անհատ անձանց: Բիզնես մտադրութիւններ ունեցող մի տղամարդու՝ ուժեղ, կայացած, ֆինանսապէս ոչ անկարող մէկին հարցնում եմ՝ ինչո՞ւ չես գործ դնում, քո սեփական բիզնեսը ձեռնարկում: Թիկնեղ տղամարդը միանգամից կուչ է գալիս, դառնում մի բուռ՝ չեն թողնի, կը խեղդեն: Իսկ դու փորձիր, պայքարիր՝ համոզում եմ նրան: Չէ, չէ՝ գործ չունեմ, էդ բիզնէսը «Պողոսինն» է՝ «կիսարողս կը փակի»:

Այս նոյն վախն է աշխատանքից ապօրինաբար ազատուած ուսուցչի, աշխատավարձը, որպէս նաւրոգ, բաժնի վարչին մուծուող բուժքրոջ, գիւղապետի հրահանգով քուէարկող գիւղացու մօտ:

«ՀՐԱՊԱՐԱԿ»

ՄԱՍԻՍ ՇԱՐԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ
ԱՌՑԻԱԼ ԴԵՄՈՂՐԱՏ ՀՆՁԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի
ԽՄԲԱԳԻՐ
SOPƏ. ԱՐՇԱԿ ԳԱՁԱՆՃԵԱՆ
ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ
ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ
MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party
of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August
ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$80.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$225.00 (Air Mail).
All payments must be made in
US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Ընտրութիւններով իշխանափոխութիւն Չի Լինի».- Ազատամարտիկ

«Ընտրութիւններով իշխանափոխութիւն չի լինի, իշխանափոխութիւն պիտի անենք, յետոյ ընտրութիւններ լինեն, իսկ իշխանափոխութիւնն արուելու է առանց ցնցումների, պարզապէս ժողովրդին մոբիլիզացնելով», - «Նոյեան Տապան» ակումբում իշխանափոխութեան տարբերակը ներկայացրեց ազատամարտիկ Սուրէն Սարգսեանը:



Ազատամարտիկ Սուրէն Սարգսեան

Նշենք, որ արդէն տեւական ժամանակ է՝ ազատամարտիկները մշակում են իշխանափոխութեան տարբեր սցենարներ, եւ արդէն որոշ կուսակցութիւններ էլ «կլոր սեղանի» քննարկումներին են մասնակցում ու իշխանափոխութեան տարբերակներ առաջարկում: Պարոն Սարգսեանը հաւաստիացրեց, որ առաջիկայում յայտարարութիւն կը ստորագրուի, «կլոր սեղանի» մասնակիցներին էլ, եւ բոլոր այն կուսակցութիւնները, ովքեր ցանկութիւն կ'ունենան, կարող են մասնակցել:

Ազատամարտիկի դիտարկմամբ՝ «Եթէ այս պահին ՀՀ նախագահ Սերժ Սարգսեանը հրաժարական տուեց, նոյն վայնասունով սկսուելու են ընտրութիւնները, պիտի փորձեն, Սերժի ասածով՝ վերարտադրուեն այս կամ այն կլանի ներկայացուցիչները, կապ չունի անունները: Այս որակով չի կարող իշխանափոխութիւն լինել»:

Aravot.am-ը հետաքրքրուեց՝ ո՞վ պէտք է ժողովրդին կառավարի, որպէսզի մոբիլիզացվի հասարակութիւնը, եւ արդեօք կասկածելի չէ՞ այդպէս բացայայտ յեղափոխութիւն ծրագրել, քանի որ նախորդ քննարկումներին նաեւ յեղափոխութիւն անելու տարբե-

րակն էր առաջ քաշուել: «Իշխանափոխութիւն կամ յեղափոխութիւն կոչուածը երկու ձեւով է տեղի ունենում. կամ՝ կրակոցներով, կամ էլ՝ առանց դրա, ժողովրդի համախմբմամբ: Ո՞վ պիտի համախմբի ժողովրդին, մենք, այդ «կլոր սեղանի» կուսակցութիւնները, բոլորս երբ կը գանք յայտարարի՝ համատեղ յայտարարութիւններով, համատեղ քայլերով մենք կը բերենք հրապարակ: Լիդերի խնդիր դրուած չէ, իմաստ էլ չկայ: Իսկ իշխանութիւնները չեն կարող չզնայլ, մենք մոբիլիզացնում ենք քաղաքացիներով, չեն կարող չզնայլ, իսկ եթէ այդքան տխմար կը լինեն, ինչպէս Երեւանի այդ ոստիկանապետն ասաց՝ բիրտ ուժ կիրառեն, նախ չեն կարող, որովհետեւ ո՞ւմ միջոցով այդ ուժը պիտի կիրառեն, դրանք մեր տղերքն են, ոստիկանները ժողովրդի ծոցից դուրս եկած տղերքն են: Ժողովրդով դուրս ենք գալու հրապարակ եւ պահանջներ հրաժարականը», - պատասխանեց պարոն Սարգսեանը:

Վարչապետի Յայտարարութիւնը Մինսկում Ստորագրուած Փաստաթղթերի Մասին

Հայաստանի Հանրապետութեան բոլոր կառույցներն ազատ են իրենց յայտարարութիւնների մէջ՝ նպատակաշարժարութիւններից ելնելով եւ Սահմանադրութեան շրջանակներում: Այդ մասին նոյնիմբերի 13-ին խորհրդարանում յայտարարել է վարչապետ Տիգրան Սարգսեանը՝ պատասխանելով ԲՀԿ խմբակցութեան պատգամաւոր Նաիրա Զոհրաբեանի հարցին, թէ Մինսկում Հայաստանի նախագահի ստորագրած փաստաթղթում կան այսպիսի տողեր. «չանել Մաքսային միութեան շահերին հակասող յայտարարութիւններ»:

Պատգամաւորը հետաքրքրուել է, թէ ով եւ ինչպէս է որոշելու՝ Հայաստանի յայտարարութիւններից որոնք են հակասում Մաքսային միութեան շահերին, եւ ընդհանրապէս, որն է Մաքսային միութեան շահը, քանի որ Ռուսաստանն ունի իր, Բելառուսն՝ իր, Ղազախստանն՝

իր շահերը: Նա որպէս օրինակ բերել է Ղազախստանի, Թուրքիայի եւ Ադրբեյջանի նախագահի համատեղ յայտարարութիւնը դարաբաղեան հարցի շուրջ:

Վարչապետը համաձայնուել է պատգամաւորի հետ, որ ոչ միայն ՄՄ, այլեւ ՀԱՊԿ գործընկերները չեն պահպանում պայմանաւորուածութիւնները, որ ձեռք են բերուել: «Հայաստանի քաղաքական դիրքորոշումը կայանում է նրանում, որ մենք պէտք է առաջիկայում միջոցներ ձեռնարկենք, որոնք թոյլ կը տան դառնալ մաքսային միութեան լիիրաւ անդամ, եւ Ռուսաստանի, Բելառուսի եւ Ղազախստանի հետ յարաբերութիւնները կառուցել այդ հունով»:

Պատգամաւորը նշել է, որ պատասխանը չի բաւարարում իրեն, ինչին վարչապետը պատասխանել է. «Ես կը ծանօթանամ ամբողջ փաթեթի հետ, որ վկայակոչում էք եւ լրացուցիչ պատասխան կը տամ»:

ԱՊՅ Տարածաշրջանում Մամուլի Ազատութեան Յուցանիշով Հայաստանը Երրորդ Տեղում Է

Մոլդովան մամուլի ազատութեան ցուցանիշով առաջատար է դարձել Արեւելեան համագործակցութեան երկրների շրջանում: Media Freedom Watch ծրագրի անցկացրած հետազոտութեան արդիւնքները, Մոլդովային յաջորդում են Վրաստանը, Հայաստանը, Ուկրաինան:

Մամուլի ազատութեան ցուցանիշները Արեւելեան համագործակցութեան երկրներում որոշուել են 2013-ի Յուլիսից Սեպտեմբեր ամիսներին ընթացքում՝ հարուստ անցկացնելով փորձագէտների շրջանում (Իւրաքանչիւր երկրից՝ 10 փորձագէտ), ովքեր որոշակի միաւորներ են շնորհել երկրներին: Առաւելագոյն միաւորը Իւրաքանչիւր երկրի համար 1650-ն է:

Խորհրդարանը ԼՂՀ Անկախութեան Ճանաչման Նախագիծը Սերժուեց

10 կողմ, 0 դէմ, 1 ձեռնպահ ձայների յարաբերակցութեամբ Նոյեմբեր 13-ին Հայաստանի Ազգային ժողովը մերժեց «Ժառանգութեան» ներկայացրած նախագիծը՝ ՀՀ կողմից ԼՂՀ անկախութեան ճանաչման մասին: Կողմ էին քուէարկել ՀԱԿ պատգամաւորներ Նիկոլ Փաշինեանը, Հրանդ Բաղդասարեանը, «Ժառանգութեան» եւ ՀՅԴ պատգամաւորները:

Ի դէպ, ՀԱԿ խմբակցութեան ղեկավար Լեւոն Զուրաբեանն այսօր եւս վարման կարգի վերաբերեալ յայտարարութեամբ հանդէս եկաւ՝ նշելով, որ լինելով ԼՂՀ անկախութեան ճանաչման ջատագովը տարիներ ի վեր, այսօր ժամանակավրէպ են համարում այս հարցի քննարկումն ու այդ պատճառով չեն մասնակցել քուէարկութեանը:

Երբ «Ժառանգութիւն» խմբակցութեան ղեկավար Զարուհի Փոստանջեանը փորձեց վարման կարգի վերաբերեալ ձայն խնդրել, ԱԺ նախագահ Յովիկ Աբրահամեանը յայտարարեց, որ եթէ նա փորձի նախագծի բովանդակութեան մասին խօսել, այլ ոչ թէ վարման կարգի, նա կ'անջատի պատգամաւորի միկրոֆոնը:

Արդիւնքում տիկին Փոստանջեանը չկարողացաւ աւարտին հասցնել իր միտքը: ՀՀԿ խմբակցութեան ղեկա-

վար Գալուստ Սահակեանը յայտարարեց, որ իրենք այն մարդիկ են, որ քաղաքական դաշտ են եկել ԼՂՀ հարցով. «Ես ուզում եմ ձեզ յիշեցնել, որ ահա՞նք ինչն ու բոյկոտը իրարից տարբերէք, որպէսզի հասկանաք, թէ ինչու չենք մասնակցում քուէարկութեանը»:

Սա նաեւ կոալիցիոն որոշում է: Նրա խօսքի ընթացքում ԱԺ նախագահ Յովիկ Աբրահամեանը փորձեց սաստել պատգամաւորներից մէկին, որը գուզահեռ խօսում էր:

ԲՀԿ խմբակցութեան քարտուղար Նաիրա Զոհրաբեանը յայտարարեց, որ ԼՂՀ-ն այն հարցը չէ, որ կարող է կուսակցական խաղերում մանրադրամ դառնալ. «Այդ պատճառով մենք չենք մասնակցել քուէարկութեանը»:

Երբ փորձեց խօսել ՀԱԿ պատգամաւոր Հրանդ Բաղդասարեանը՝ ներկայացնելով խնդրի էությունը տնտեսական տեսանկիւնից, Յովիկ Աբրահամեանն անջատեց նաեւ նրա միկրոֆոնը:

ԱԺ պատգամաւորներ Խաչատուր Քոբրէյլեանն ու Էդմոն Մարութեանը եւս յայտարարեցին, որ չեն մասնակցել քուէարկութեանը: Իսկ Ալեքսանդր Արզումանեանը, յայտարարելով, որ հաշուի առնելով ստեղծուած իրադրութիւնը, ինքը ձեռնպահ կը քուէարկի, թէեւ դեռ երէկ յայտարարել էր, որ դէմ է լինելու:

Վարդան Պետրոսեանը Կը Բողոքարկի Դատարանի Որոշումը

Դերասան Վարդան Պետրոսեանը կը բողոքարկի դատարանի որոշումը՝ կալանքը որպէս իր նկատմամբ խափանման միջոց ընտրելը:

Յիշեցնենք՝ Կոտայքի մարզի ընդհանուր իրաւասութեան դատարանը բաւարարեց նախաքննական մարմնի միջնորդութիւնը՝ որպէս խափանման միջոց երկամսեայ կալանք կիրառելով դերասանի նկատմամբ:

«Վստահ եմ, որ բողոքը բաւարարուելու է, որովհետեւ մի քանի անգամ կարդացել եմ դատարանի որոշումը եւ կալանքի համար գոնէ մէկ իրաւական հիմք չեմ գտել այնտեղ», - «Ազատութիւն» ռադիոկայանին փոխանցեց յայտնի դերասանի փաստաբան Նիկոլայ Բաղդասարեանը:

Վարդան Պետրոսեանին մեղադրանք է առաջադրուել Քրէական օրէնսգրքի 242-րդ յօդուածի 3-րդ մասով՝ ճանապարհային երթեւեկութեան կամ տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտելը, որն անգուշութեամբ առաջացրել է երկու կամ աւելի մարդու մահ: Մեղադ-

րանքը հաստատուելու դէպքում դերասանին սպառնում է 4-10 տարուայ ազատազրկում:

Հոկտեմբերի 20-ին Եղուարդ-Երեւան աստիճանապարհին Վարդան Պետրոսեանի մասնակցութեամբ տեղի ունեցած ակտիվիզմի հետեւանքով գոհուել են երկու երիտասարդներ՝ հօրեղբորորդիներ Էդգար եւ Էդուարդ Յակոբեանները:

Մինչեւ կալանաւորուելը դերասանը լրագրողների հետ զրոյցում մեծ ողբերգութիւն է որակել տեղի ունեցածը՝ ցաւակցելով գոհերի հարազատներին:

Միաժամանակ Պետրոսեանը տարակուսանք ու անվստահութիւն է յայտնել քննիչների գործողութիւնների նկատմամբ՝ վստահեցնելով, որ մտադիր չէ թաքնուել եւ պատրաստ է կրել պատիժը, եթէ դատարանը նման վճիռ կայացնի:

«Եթէ ինձ հասնում է նստել 4-10 կամ 14-20 տարի, ես նստելու եմ: Բայց թող ոչ մէկի մտքով չանցնի, որ ես մի մազ անգամ փորձելու եմ խուսափել պատասխանատուութիւնից», - ասել է դերասանը:

Միեր Սեդրակեանը Ընդդիմադիրների Մասին. «Ամէն Մէկն Էլ Մի Երեք-Չորս Հատ Էլ Կնիկ Ունեն»

Դուք աւելի լաւ է տեսէք, թէ ընդդիմութիւնն ինչ վիլլաներ ունի: Այդ մասին Նոյեմբերի 12-ին ԱԺ-ում լրագրողների հետ զրոյցում ասաց ՀՀԿ-ական պատգամաւոր Մհեր Սեդրակեանը, պատասխանելով այն հարցին, թէ ինչպէս է վերաբերում, որ Վերահսկիչ պալատի նախագահի թեկնածուն ունի առանձնատուն, ինչի մասին բարձրաձայնում են ընդդիմադիրները: «Չեմ ուզում շատ խորանամ, բայց նայէք ընդդիմութեան գլուխգործոցներին, բոլորինն էլ նայէք տեսէք՝ ինչեր ունեն, չեմ ուզում անուններ տալ: Ամէն մէկն էլ մի երեք-չորս հատ էլ կնիկ ունեն», - ասաց Մհեր Սեդրակեանը: Յիշեցնենք, որ ԱԺ-ում ՎՊ նախագահ Իշխան Զաքարեանի առանձնատան հարցը պարբերաբար բարձրացնում է ընդդիմադիր պատգամաւոր Նիկոլ Փաշինեանը, պահանջելով, որ Զաքարեանը ներկայացնի, թէ ինչպէս է ձեռք բերել այդ առանձնատունը: Ի. Զաքարեանն էլ իր հերթին պնդում է, որ այդ առանձնատունն իր համար կառուցել է ինչ-որ ներդրող:

ԼՈՒՐԵՐ

Սերժ Սարգսեանը Ծանօթացել է ԼՂՀ-ում Բանակաշինութեան Աշխատանքների Ներկայիս Վիճակին



Սերժ Սարգսեան Ղարաբաղ կատարած այցի ընթացքին: Ձախին Ջոռի Բալայեան եւ աջին՝ ՀՀ պաշտպանութեան նախարար Սէյրան Օհանեան

Հայկական երկու հանրապետութիւնների միջեւ առկայ փոխգործակցութեան ծրագրի շրջանակներում աշխատանքային այցով Արցախում գտնուող ՀՀ նախագահ Սերժ Սարգսեանը ԼՂՀ նախագահ Բակո Սահակեանի, ՀՀ պաշտպանութեան նախարար Սէյրան Օհանեանի, ԼՂՀ պաշտպանութեան բանակի հրամանատար, գեներալ-լեյտենանտ Մովսէս Յակոբեանի եւ բանակի հրամանատարական կազմի հետ միասին եղել է հանրապետութեան հիւսիսային հատուածի ՊԲ մի շարք գործասերում ու գործասերի պահպանութեան տակ գտնուող առաջնագծում:

ցուող զորավարժութիւնների դիտարկմանը՝ «Գումարտակի անցումը պաշտպանութեանը» թեմայով, որի ժամանակ ներկայացուել են ընթացքից պաշտպանութեան բնագծի գրառումը եւ պաշտպանական մարտի վարման տարրերը: Հանրապետութեան նախագահը ներկայ է գտնուել նաեւ գինաւանում շտաբ-գործառնոցի մասնաշէնքի եւ սպաների համար ժամանցի ու հանգստի մասնաշէնքի բացման արարողութիւններին: Նա ծառայութեան ընթացքում առաւել աչքի ընկած եւ բարեխիղճ սպաներին ու գինուորներին պարգևատրել է թանկարժէք նուէրներով, գրուցել գինձառայողների եւ նրանց ընտանիքի անդամների հետ:

«Ես Մանկութիւնից Հայերի Մասին Միայն Լաւն Եմ Լսել».- Արթուրեանցի Գրող Ալլիսլի

«Մենք հայերի հետ կուռում ենք հողի համար, սակայն հողը ոչ ոքի պէտք է: Մենք ձեզ հետ դժբախտութեան ընկերներ ենք: Ո՛չ Պուտինը, ո՛չ Ալիեւը հողի տէրեր չեն, նրանք հարստութեան, նախապիտանութեան զէնքեր են»:

«Քարէ երազներ» գրքի պատճառով հալածուած գրող Աբրահամ Ալլիսլին:

«Ես 75 տարեկան եմ, եւ պատրաստ եմ իմ կեանքը նուիրել նրան, ում պէտք է խաղաղութիւն, պէտք է մարդկային ջերմութիւն, նորմալ յարաբերութիւններ հարեւանների հետ», -ասել է Ալլիսլին:

Նա նշել է, որ չի ցանկանում մահանալ՝ առանց երկու ազգերին միասին տեսնելու:

«Ես նման մահ չէի ցանկանայ: Երբ գրեցի («Քարէ երազներ»-ը), մտածեցի, որ դա չեմ հրատարակի: Յետոյ մտածեցի, որ որքան էլ դա թանկ արժենայ, պէտք է դէմ գնալ այն ամէնին, ինչ տեղի կ'ունենայ», -ասել է գրողն ու կոչ արել տեսնել այն ամէնը, ինչ հայերի հանդէպ արել են Ադրբեջանում:

«Եղբայրներ՛ր, եկէք խոստովանենք: Միայն դրանից յետոյ հնա-



«Քարէ երազներ» գրքի պատճառով հալածուած գրող Աբրահամ Ալլիսլի

րաւոր կը լինի գնալ դէպի լաւը: Ինչէր միայն չասացին՝ նոյնիսկ ասացին ստուգեն, թէ Աբրահամ ինչ արելն ունի, չնայած որ գիտէին՝ ես գտարիւն թուրք եմ: Ասացին, որ ես ցանկանում եմ Նոբելեան մրցանակ ստանալ: Ամենացաւալին այն էր, որ դա ասում էին ժողովրդի անունից: Ինչ-որ գրասենեակային առնետ ինձ սովորեցնում է, թէ ինչ է մտածում ժողովուրդը: Օրինակ՝ ես մանկութիւնից՝ տատիկիցս, մայրիկիցս, քեռուցս միայն լսւն եմ լսել հայերի մասին», -ասել է Աբրահամ Ալլիսլին:

«Հայաստանը Պէտք է Յաղթահարի Թուրքիայի Հանդէպ Անվաստահուութիւնը».- Դաւութօղլու



Թուրքիայի արտաքին գործոց նախարար Ահմէթ Դաւութօղլու

Թուրքիան եւ Ադրբեջանը տարածաշրջանի խնդիրների շուրջ միանման մտայնում ունեն: Այս մասին յայտարարել է Թուրքիայի արտգործնախարար Ահմէթ Դաւութօղլուն՝ թուրքական NTV հեռուստաընկերութեան եթերում:

Նրա խօսքով՝ Թուրքիան եւ Ադրբեջանը համատեղ բազմաթիւ նախագծեր ունեն:

Ահմէթ Դաւութօղլուն այցելել է նախագահի պաշտօնում վերընտրուելուց յետոյ Թուրքիա ժամանած Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւին եւ քննարկել Թուրքիա-Հայաստան-Ադրբեջան յարաբերութիւնները:

Դաւութօղլուն յայտարարել է, որ Հայաստանի հետ յարաբերութիւնների կարգաւորման համար ջանքեր են գործադրուում երեք ուղղութիւններով՝ Հայաստան-Թուրքիա, Հայաստան-Ադրբեջան, եւ սփիւռքն էլ ներառող հայ-թուրքական շփումներ:

«Հայաստանը պէտք է յաղթահարի մեր հանդէպ ունեցած անվաստահուութիւնը, ինչպէս նաեւ չանտեսի Ադրբեջանի արդար պահանջները», -ասել է նա:

Դաւութօղլուն ասել է նաեւ, որ Հայաստանում եւ Ադրբեջանում կայացած ընտրութիւններում յաղթած եւ ուժեղացած առաջնորդների առկայութիւնը կովկասում խաղաղութեան հաստատման համար անհրա-

ժեշտ պայմաններ է սկսել ձեւաւորել:

Թուրքիայի արտգործնախարարը յայտարարել է, որ յաջորդ շաբաթների ընթացքում պատրաստուում է այցելել ԱՄՆ եւ Ռուսաստան, եւ այդ այցերի ընթացքում քննարկելու է կովկասում խաղաղութեան հաստատման խնդիրը:

«20 տարուց աւելի սառած հակամարտութիւնը ջերմացնել է պէտք: ԱՄՆ-ի, Ռուսաստանի եւ Ֆրանսիայի ներկայացուցիչներին բաղկացած Մինսկի եռեակը մինչ այժմ հակամարտութիւնը լուծման չի հասցրել: Ներկայումս մենք համոզուած ենք, որ աստիճանաբար նպատակին հասնելուն ուղղուած քայլերն աւելի առողջ արդիւնքի կը հանգեցնեն», -ասել է նա:

ՄԱՐՍԵԼՈՒՄ ԲԱՅՈՒԵՑ ՀՀ ՂԵՒԱԴՈՐ ՀԻՊԱՏՈՍՈՒԹԻՒՆԸ

Նոյեմբերի 8-ին ԱԳ նախարար՝ էդուարդ Նալբանդեանը եւ Մարտիկի քաղաքապետ, սենատոր՝ Ժան-Կլոդ Գոդենը կատարեցին Մարսելում Հայաստանի Հանրապետութեան գլխաւոր հիւպատոսութեան բացման հանդիսաւոր արարողութիւնը, որին ներկայ էին Ֆրանսայի խորհրդարանականներ, քաղաքական, հասարակական եւ մշակութային գործիչներ, հայ համայնքի անդամներ:

Միջոցաւմանը հանդէս գալով ողջունել խօսքով՝ ԱԳ նախարար՝ էդուարդ Նալբանդեանը կարեւորեց Մարսելում ՀՀ գլխաւոր հիւպատոսութեան հիմնադրումը՝ ընդգծելով, որ Մարսելը առանձնապատկեր նշանակութիւն ունի մեր ժողովրդի համար:

«Հայերի ներկայութիւնը Մարսելում սկիզբ է առել դեռ վաղ միջնադարում: Արեւելքի եւ Արեւմուտքի միջեւ արտօնեալ առեւտուր իրականացնող հայ վաճառա-

կանները ակտիւ գործունէութիւն էին ծաւալում այս քաղաքում», -ասաց նախարար Նալբանդեանը:

«Մարսելը դարձաւ առաջին ֆրանսական քաղաքը, որը հիւրընկալեց Հայոց ցեղասպանութիւնից մազապուրծ եղած հազարաւոր հայերի: Նրանցից շատերը հաստատուեցին այստեղ, դարձան իրական մարսելցիներ եւ մինչ այսօր իրենց ներդրումն են բերում քաղաքի զարգացմանը»:

Մարսելի քաղաքապետ՝ Ժան-Կլոդ Գոդենը իր խօսքում ընդգծեց՝ որ իր համար մեծ պատիւ է ներկայ գտնուել Ֆրանսայում բարեկամ Հայաստանի առաջին գլխաւոր հիւպատոսութեան բացման արարողութեանը, քանզի ինքը ամենաջերմ զգացումներն է տածում հայ ժողովրդի նկատմամբ եւ Հայաստանի հետ համակողմանի համագործակցութեան զարգացման ջատագովներից է:

Իսրայէլը Չի Դադարեցրել Սպառնազինման Մատակարարումը Ադրբեջանին

Իսրայէլի ԱԳՆ-ն հերքում է ադրբեջանական եւ հայկական ՁԼՄ-ներում տարածուած տեղեկութիւնն այն մասին, որ Իսրայէլը դադարեցրել է սպառնազինման մատակարարումն Ադրբեջանին:

Համաձայն տուեալ հրապարակումների՝ Ռուսաստանը ճնշում է գործադրել Իսրայէլի արտգործնախարարութեան վրայ եւ կարողացել է հասնել սպառնազինման որոշ տարրերի մատակարարման դադարեցմանը: Որպէս պատճառ նշում է տարածաշրջանում ուժերի հաւասարակշռութիւնը չփոխելու Ռուսաստանի ցանկութիւնը:

«Այս ոլորտում ոչ մի փոփոխութիւն տեղի չի ունեցել, Ռուսական կողմից ոչ մի դիմում չի ստացուել», - յայտարարել է Իսրայէլի ԱԳՆ մամլոյ քարտուղար Իգալ Փալմորը:

Յիշեցնենք, որ Իսրայէլը համարուում է Ադրբեջանին սպառնազինութեան խոշոր մատակարարներից մէկը:

Նա նշել է, որ եթէ այսօր ադրբեջանցիների շրջանում հանրաքուէ անցկացուի, ապա ճնշող

մեծամասնութիւնը կողմ կ'արտայայտուի հայերի հետ յարաբերութիւնների կարգաւորմանը:

ԴԱՄԱՍԿՈՍԱՅԱՅ ԵՐԿՈՒ ԵՐԵՒԱՅ ՀՐԱՍԱՆԴԻ ԶՈՐ

Սուրիահայտնությունը տուժալ Սուրիոյ հակամարտութեան իր հերթական գոհերը: Երկուշաբթի կէսօրին, հրասանդ ինկալ Դամասկոսի հայաշատ Պապ Շարքի թաղամասի Սուրբ Թարգմանչաց վարժարանին առջեւ, Սուրբ Սարգիս եկեղեցոյ մօտ: Հրասանդի պայթուածին հետեւանքով գոհուեցան 5 անձեր, ներառեալ 4 երեխաներ եւ վարժարանի փոխադրակառքի վարորդը: Զոհերէն երկուզը հայ էին՝ վեցամեայ Յովհաննէս Աթոքեանը եւ ութամեայ Վանեսա Միխո Պետրոսը: 10 երեխաներ վիրաւորուեցան ու փոխադրուեցան հիւանդանոց: Նշենք, որ հրասանդը ինկալ վարժարանէն աշակերտներու արձակուամի պահուն: Գրեթէ նոյն ատեն հրասանդ մը ինկալ նաեւ Քասսա թաղամասի վարժարանին վրայ, պատճառելով 4 գոհ եւ առնուազն 15 վիրաւոր:

Հայկալի մէջ, երկու ուժերը ինկալ հայաշատ Ազիզիէ թաղամասին վրայ, հարուածելով բժշկական կեդրոն մը: Ի դէպ, Հայկալի մէջ վերջին 5 օրերուն ամբողջութեամբ ընդհատուած է

Հրամատակարարումը, բարդացնելով աւելի կանուխ զարգացած ելեկտրականութեան տազնապը: Հալէպէն հասած տեղեկութիւններուն համաձայն, քաղաքացիներուն ջուր կը բաժնեն եկեղեցիներէն եւ մզկիթներէն, ուր ամիսներ առաջ փորած էին ջրհորներ, կանխատեսելով ջուրի հաւանական տագ նապ: Ըստ տեղեկութիւններուն, Հալէպի փողոցներուն վրայ կարելի է տեսնել շիշ եւ թոյլ կրող հազարաւոր քաղաքացիներ, որոնք կը փորձեն ամէն գնով տիրանալ ջուրի: Իշխանութիւններուն համաձայն, Հրամատակարարումը ընդհատուած է ելեկտրականութեան բացակայութեան պատճառով:

Զինուորական գործողութիւններու ծիրին մէջ բանակը յայտարարեց, որ իր տիրապետութեան տակ առած է Հայկալի եւ Սֆէյրա քաղաքին միջեւ գտնուող շարք մը գիւղեր եւ աւաններ, ներառեալ օդակայանին անվտանգութիւնը երաշխաւորող թիւ 80 գումարտակի կեդրոնատեղին:

Հայ-Թուրք Յարաբերութեան

Մարումակուած էջ 1-էն

Յեղասպանութեան նուիրուած միջոցառումներուն, իսկ Գերմանիոյ մէջ ձախակողմեան թուրքերու հետ Յեղասպանութեան ճանաչման եւ ոգեկոչման ուղղութեամբ աշխատանքներ տանիլ:

Իմացանք նաեւ որ Նոյեմբերի 30-ին «Կանաչներ եւ Զախ

Ապագայ» կուսակցութեան համագումարը տեղի պիտի ունենայ Անգարայի մէջ, որուն հրահրուած է ՄԴՀԿ-ը:

Յիշեցնենք որ այս տարուան Յունիսի Պոլսոյ մէջ տեղի ունեցած 20-ներու ոգեկոչման ձեռնարկներուն իր զգալի մասնակցութիւնը բերած էր «Կանաչներ եւ Զախ Ապագայ» կուսակցութիւնը:

«Զորեան» Հիմնարկի Աջակցութեան Շնորհիւ

Մարումակուած էջ 1-էն

րու ուսումնասիրութեամբ զբաղող «Զորեան» Հիմնարկի աջակցութեան շնորհիւ:

Ստորագրուած համաձայնագիրի հիման վրայ, երկու թանգարաններու միջեւ պիտի կատարուին գիտելիքներու եւ փորձի փոխանակում, մշակուին ուսումնական ծրագիրներ, ցուցահանդէսներ՝ կապուած մարդկային իրաւունքներու հետ: Նախատեսուած է լայն տեղ յատկացնել Հայկական Յեղասպանութեան եւ անոր ունեցած ազդեցութեան՝ արդարութեան հասնելու նպատակով:

«Հայկական ցեղասպանութիւնը ծանօթացնելով մենք յոյս ունինք չիշեցնելու ժողովուրդներուն,

մարդակային իրաւանց խախտումներու գծով լուծութեան պատի քանդումի կարեւորութիւնը: Մենք ուրախ են համագործակցելու Գանատայի Մարդկային Իրաւանց Թանգարանին հետ, այս նպատակին հասնելու համար», - համաձայնագրի ստորագրութեան առթիւ յայտարարեց Հայկ Դեմոյեան:

Պաշտօնական արարողութեան հրահրուած էին նաեւ Գանատահայ բոլոր կազմակերպութիւնները, որոնց շարքին նաեւ Հայ Դատի Յանձնախումբը: Սակայն, այս կազմակերպութեան կողմէ հրապարակուած հաղորդագրութիւն մը, ոչ միայն կ'անտեսէ Զորեան Հիմնարկի կարեւոր ներդրումը ծրագրի իրականացման մէջ, այլ նաեւ կը փորձէ յաջողութիւնը վերագրել ինքզինքին:

ՍԻՐԻԱՅԵՐԻ ՎԵՐԱԲՆԱԿԵՑՈՒՄՆ ԱՐՑԱԽՈՒՄ ՆԱԵՒ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹԻՒՆ Է

Անի ՄԱՐԳԱՐԵԱՆ

Դեռեւս 2012-ի Մայիսին առիթ ունեցանք Արցախում գրուցել Քաշաթաղի շրջանի վերաբնակեցման վարչութեան պետ Ռոբերտ Մաթեւոսեանի հետ, որը նշել էր Կովսական քաղաքում վերաբնակութիւն հաստատած սիրիահայ 6 ընտանիքի մասին:

Սիրիայում հակամարտութիւնը մինչ օրս շարունակուած է, սիրիահայերը շարունակուած են բնակութիւն հաստատել Արցախի տարածքում, եւ այս հանգամանքը քննարկումների տեղիք է տալիս թէ՛ Հայաստանում, թէ՛ Ազրբեջանում:

Ամբողջական պատկերացում կազմելու նպատակով կրկին այցելեցինք Արցախ, եղանք Քաշաթաղի գիւղերում եւ գրուցեցինք այստեղ վերջին շրջանում վերաբնակեցուած սիրիահայերի հետ:

Մեզ ուղեկցում էր «Քաշաթաղ» բարեգործական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամ Արտիուշ Միթարեանը:

Ինչ քայլեր են արուած սիրիահայերի վերաբնակեցումը խթանելու եւ գործընթացը դիւրին դարձնելու ուղղութեամբ:

Մեր թիւ մէկ խնդիրը բնակարանների ապահովումն է, մենք մեզանից կախուած ամէն ինչ անում ենք: Խնդիրների մեծ մասը բարեգործական միջոցներով է լուծուած: Բերձորում 3 բնակարան «Քաշաթաղ» բարեգործական ընկերութիւնն է կառուցել, դրանք արդէն բնակեցուած են, 2 առանձնատուն կառուցուել է «Հայրենիք» բարեգործական միութեան միջոցներով, կառավարութիւնն էլ տանիքի շինանիւթն է ապահովել: Ասեմ, որ 1 բնակարան է կանգնեցուել «Ազապէ» բարեգործական ընկերութեան ջանքերով Բերձոր քաղաքում, Իշխանաձորում 9 բնակարանով շէնք կառուցել է կրկին «Քաշաթաղ»-ը, տանիքի շինանիւթը տրամադրել է կառավարութիւնը: Կովսականում 12 բնակարան ունեցող շէնք են կառուցում: Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Առաջին կաթողիկոսը նուիրաբերել է 50,000 ԱՄՆ դոլար, «Օգնիր եղբորդ» հիմնադրամի կողմից ստացել ենք 12 միլիոն դրամ:

Նշեմ նաեւ Թուֆենկեան հիմնադրամի մասին, որի ջանքերով Քաշաթաղում սիրիահայերի համար եւս մի բազմաբնակարան շէնք է կառուցուել:

-Միջավայրին յարմարուելու

ընթացքում սիրիահայերն ինչ խնդիրներ են հարկադրուած լինում յաղթահարել:

-Նախ մեր տեղաբնիկները պէտք է գիտակցեն, որ Սիրիայի մեր հայրենակիցները պատերազմից մաշր հող են եկել, դրա համար էլ որոշակի արտօնութիւն ունեն: Մենք պէտք է այնպէս անենք, որ նրանք չմտածեն Սիրիա յետ գնալու մասին: Կենցաղ, սնունդ ...առաջին անհրաժեշտութեան ամէն ինչ հոգում ենք: Քաշաթաղ տեղափոխուածները հիմնականում Սիրիայի Ղամըշի քաղաքից են, աշխատող մարդիկ են, հողով են զբաղում, հացահատիկային մշակաբոյսերին ծանօթ են: Յաւօք, որոշ հատուածներում եղանակային պայմանների պատճառով անցեալ տարի լաւ բերք չեղաւ:

Յաղթահարելի խոչընդոտ է, բայց կայ լեզուի խնդիր, դա էլ ընթացքում կը շակուի: Սիրիահայերի երեխաները, որ սովորում են տեղի դպրոցներում, յաճախում տեղի մանկապարտէզներ, հայերէնը հեշտ սերտում են:

Քաշաթաղի վերաբնակիչներից մէկը՝ Վարդան Պողոսը, որը ծնուել ու մեծացել է Սիրիայում, իր տիկնոջ, դստեր, եղբոր ու կնոջ հօր հետ եկել է Արցախ, ծնողները դեռ Սիրիայում են: Նա 2012-ի Սեպտեմբերին ժամանել է Շուշի, մնացել 2-3 օր, ապա տեղափոխուել Բերձոր: «Այստեղ սիրիահայեր շատ կան, հող կայ, դրա համար էլ հաստատուեցի այստեղ: Ես ու միւս սիրիահայերը դաշտեր ենք հերկում: Սկզբում Բերձորում վարչակազմում հաշուապահութիւն արեցի, տնտեսագէտ եմ

մասնագիտութեամբ, հիմա էլ շրջանի ղեկավարի օգնականն եմ սիրիահայերի գծով: Կինս մանկապարտէզում հաշուապահ է, երկուսս մեզ աղջկա կինս ամէն օր իր հետ տանում է մանկապարտէզ», - մեզ հետ գրոցում մանրամասնեց վերաբնակիչը:


Իրականութիւնն Արցախում համապատասխանում էր Ձեր պատկերացումներին:

Վարդան Պողոսը, Հրաչը. -Հիմնականում այո, բայց դա անհատական է, լաւ կը լինի՝ ամէն մի սիրիահայ իր փոխարէն պատասխանի: Բայց ասեմ, որ սիրիահայերի մեծամասնութիւնը, որ սկզբում եկաւ, ծանօթացաւ Քաշաթաղին, հաւանեց, զնաց յետ Սիրիա ու ընտանիքով յետ եկաւ բնակուելու

Մար.ք էջ 19


Bedros S. Maronian
818/500-9585

Siamanto B. Maronian
818/269-0909



SERVING THE COMMUNITY SINCE 1975
More locations and more ways to service your insurance and financial needs


<p>6300 Wilshire Blvd. Suite 1900 Los Angeles, CA 90048</p> <ul style="list-style-type: none"> • Life Insurance • Health Insurance • Group & Individual • Long Term Care • Disability 	<p>805 East Broadway Glendale, CA 91205</p> <ul style="list-style-type: none"> • Estate Planning • WMI & Living Trust • Full Annual Review • Mortgage Protection • College Planning 	<p>300 N. Lake Ave. Suite 500 Pasadena, CA 91101</p> <ul style="list-style-type: none"> • Workman's Compensation • Employee Benefits • Annuity • IRA • 401K & 403B
--	--	---



A.A. INSURANCE SERVICES

Insurance coverage can help you financially!
Ապահովագրութիւնը ԱՕհրաժեղտ է

Coverage & Protection should be on the top of your priority list.



Seniors 65 & Up Medicare Supplements • Insurance • Prescriptions Drugs RX • Benefits

ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ԽԱՆԴԱՎԱՌ ՏՕՆԱԽՄԲՈՒԹԵԱՄԲ ՆՇՈՒԵՑԱԲ «ՄԱՍԻՍ»Ի 33ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԸ

Շարունակում է 1-ին

մամուլի յատկապես շրջանիս Ս. Դ. Հնչակեան կուսակցության օրկանին դիմագրաված դժուարությունները: Ան բարձր գնահատեց հայ մամուլի առաքելությունը հայապահպանման նուիրական գործին մէջ: Միաժամանակ խիստ մտահոգիչ նկատեց ընթերցասէր հասարակության աստիճանական անտարբերությունը, որ սկսած է ստանալ նաև համաշխարհային բնույթ: Մտահոգություն յայտնեց սերնդափոխության իրավիճակին շուրջ եւ մասնաւորեւ ետք ընդհանրապես հայ մամուլի դիմագրաված դժուարին մարտահրաւերներու կապակցութեամբ, շեշտը դրաւ ընտանեկան, կրթական եւ բարեսիրական շրջանակներէ ներս մամուլի հանդէպ տիրող անտարբերութեան վրայ, դիտել տալով, թէ «Մասիս» հաւատարիմ իր կոչումին, պիտի միշտ մնայ պատենչի վրայ իր նպաստը բերելով նաև այդ ոլորտներէ ներս:

Յարգելի խմբագիրը իր խօսքը եզրափակեց շնորհակալութիւն յայտնելով իր գործընկերներուն, աշխատակիցներուն եւ թերթի բոլոր հովանաւորներուն:

Այս առթիւ Ս.Դ.Հ.Կ.ի մամուլի Դիւանի եւ թերթի խմբագրութեան անունով յետ մահու Պատուոյ

(նախապէս սառած) Արարատի գազաթէն:

Խանդավառ մթնոլորտի մէջ ելոյթ ունեցաւ Հայաստան Համահայկական Հիմնդրամի շրջանիս նորընտիր նախագահ՝ Անդրանիկ Պաղտասարեան: Ան յայտնեց, թէ՛ մօտէն կը հետեւի «Մասիս»ին: Ան իր շնորհաւորութիւններն ու բարեմաղթութիւնները փոխանցելէ ետք կոչ ուղղեց նաև սատարել հիմնադրամի յառաջիկայ թելեթոնին: Այս առթիւ Պրն.



Պաղտասարեան 5000 տոլար նուիրեց «Մասիս»ի բարգաւաճման ֆոնտին:

Դարձեալ օրուան մթնոլորտէն խանդավառուած Տէր եւ Տիկ.



Գիր յանձնուեցաւ «Մասիս»ի հիմնադիրներէն եւ առաջին խմբագիր Տօթթ. Յարութիւն Սաղբեանին, առ ի գնահատութիւն իր հրապարակագրական վաստակին եւ յարաբերական բեղուն գործունէութեան: Սոյն պատուոյ գիրը ձեռամբ Վաչէ Արք. Յովսէփեանի յանձնուեցաւ Տօթթ. Յ. Սաղբեանի այրիին՝ Տիկին Ատրիանին, որ իր երախտագիտական շնորհակալութիւնները յայտնեց մատուցուած յարգանքին համար:

Այնուհետեւ Ս.Դ.Հ.Կ.ի ատենապետ՝ Գ. Մոլոյեանի եւ Տօթթ. Ա. Գազանձեանի կողմէ յատուկ Պատուոյ գիր մը յանձնուեցաւ նաև Նոր Սերունդ Մշակութային Միութեան Ատենապետ՝ Յարութ Տէր Դաւիթեանին, որ այս ամառ ուխտագնացութիւն մը կատարելով, բարձրացած էր մեր սրբազան լեռան՝ Արարատի կատարը եւ հոն պարգած «Մասիս»ի այս տարուան Յունիս 15 թուակիր համարը, որուն մէջ կ'ոչունուէր Հնչակեան Քսաններու նահատակութեան ոգեկոչումը Պոլսոյ մէջ:

Յ. Տէր Դաւիթեան յուզումով ստացաւ տրուած պատուոյ գիրը եւ փոխադարձաբար ինքն ալ Տօթթ. Արշակ Գազանձեանին յանձնեց ապակեպատ շրջանակի մէջ առնուած «Մասիս»ի Յունիս 15ին վերոյիշեալ համարը, կողքին ունենալով պուտ մը հող եւ ջուր...

Թաղէոս Քէօրողլեան կրկնապատկելով իրենց նախորդ խոստումը՝ 10,000 տոլար նուիրեցին մեր օրկանին:

Թէեւ երեկոն հանգանակային բնույթ չէր կրեր, սակայն տեղույն վրայ տեղի ունեցան նաև մեծ ու փոքր սրտաբուխ այլ նուիրատուութիւններ:

Հետաքրքրական էր «Մասիս»ի 33րդ տարեդարձին Վրէժ անուշավաճառին կողմէ նուիրուած կարկանդակի հատման արարողութիւնը: Խմբագիր Տօթթ. Արշակ Գազանձեան գլխաւորեց արարողութիւնը, շրջապատուած այժմու եւ անցեալի խմբագիրներով եւ կարգ մը աշխատակիցներով:

Պաշտօնական բաժնի աւարտէն եւ ճաշի սպասարկութենէն ետք գործադրուեցաւ պարահանդէսային բաժինը: Սիրուած երգիչ Յարութ Յակոբեան եւ իր նուագախումբը կրցան հաճելի նուագով ու երգերով խանդավառել մթնոլորտը:

Վիճակահանութեան ճոխ պարզեմներով բախտաւորեցան բազմաթիւ ներկաներ: Կէս գիշերէն ետք Յարութ իր ազգագրական եւ յեղափոխական երգերով խանդավառութիւն իր գազաթնակէտին հասցուց: Առաւօտեան առաջին ժամերուն ներկաները սրահէն բաժնուեցան յիշարժան երեկոյի մը ուրախ տպաւորութիւններով:

ՀԱՅ ՄԱՍՈՒԼԸ ԲԵՐԴ Է ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ

Ռ. ԿՈՐԻԻՆ

Արդարեւ սրտագինս ուրախանում ենք, երբ լսում ենք նոր թերթ, նոր գիրք է հրատարակուել, առաւել եւս երբ թերթի յոբելեանն է նշում, որն ապացոյցն է թերթի յարատեւութեան եւ հրատարակիչների անխախտ սիրոյ եւ գուրգուրանքի հանդէպ իրենց որդեգրած գաղափարախօսութեան առ ի ծառայութիւն հայրենիքին եւ ժողովրդին:

Երկու պարագան էլ գովելի է, քանի որ ծնունդը՝ նոր բերդի կառուցումն է, նոր լուծայի ներդրումը մշակութային գանձանակում, իսկ հրատարակածը՝ եղածը, իր գաղափարական յուսատու եւ փորձառու աշխատանքի ընթացքն է շարունակում ի խնդիր ազգային արժէքների պաշտպանութեան եւ դիմակայումը մարտահրաւերներին: Այո՛, մամուլը ջահ է տեղեկատուութեան:

Լոյս է խաւարի դէմ: Քօղազերծող է կեղծիքի դէմ: Արդարադատ է անարդարի դէմ: Այո՛, մամուլը բերդ է պաշտպանութեան մեր հայրենիքի, ազգութեան, մշակոյթի եւ հաւատքի:

Մեր սփիւռքեան իրականութեան մէջ հայ մամուլի առաքելութիւնը մեծ է, անհրաժեշտ է առանց կուսակցական նկատառումների պաշտպան կանգնել հրապարակող թերթերին, որոնք ինչ գոհողութիւնների եւ պայմանների ներքոյ լոյս են տեսնում, հայկական կեանքը հայրենիքում եւ սփիւռքում իրենց էջերում լուսարձակում, խրախուսանք եւ քաջալերանք են դառնում գրողներին եւ արուեստագէտներին, նրանց արարումները հրատարակելով եւ հանրութեան ծանօթացնելով: Իսկապէս ափսոսեցինք Գրիգոր Ծէնեանի՝ «Նոր կեանք»ը այլեւս չի հրատարակում առողջութեան պատճառով, նա եւս գնահատելի ծառայութիւն էր մատուցում:

Ահա՛ «Մասիս»ը, մէկը մեր սփիւռքեան լրագրերից, որ արժանի հանդիսաւորութեամբ նշուեց նրա 33րդ տարեդարձը խանդավառ մթնոլորտում պատուարժան հիւրերի եւ հոծ թւով հանդիսականների ներկայութեամբ Նոյեմբերի 9-ին, 2013թիւ «Արբաթ» շքեղազարդ սրահում: Այս գրութեամբ չէ որ թղթակցութիւն եմ կատարում, նկատելով թերթը ինք բովանդակալից անդրադառնալու է, նուաստիս տպաւորութիւնն է միայն այդ հանդէսից ներկայացուած:

Հետաքրքրական հանդէս էր ոչ ծանրաբեռնուած ծրագրով, ոչ ձանձրալի, հակիրճ բացման խօսք, գլխաւոր խմբագիր՝ տօթթ. Արշակ Գազանձեանի կշռուած ու դատուած բանաւոր խօսքը, որից իմ մտապատկերումս դրոշմուեց նշանաբան խօսքեր, ինչպէս՝ «Մամուլը արգասիքն է հրաշքի», «Մեր կարելին պիտի ընենք անկարելին կարելի դարձնելու», «Կիւր տարին մի անգամ երկունք կունենայ, իսկ թերթի խմբագրութիւնը՝ շաբաթը մի անգամ» եւ այլն: Ս.Դ.Հ.Կ. Ատենապետ՝ Գաբրիէլ Մոլոյեանի հայնասիրական ոգեւորիչ արտայայտութիւնը ուղղուած Նոր Սերունդ Մշակութային Միութեան Ատենապետ՝ Յարութ Տէր Դաւիթեանին Արարատ լեռան գազաթի ուխտագնացութեան առիթով եւ այնտեղ պարգած «Մասիս»ի Յունիս 15, 2013 թուակիր համարը, ի որի մէջ յիշատակում էր Հնչակեան Քսանների նահատակութեան ոգեկոչումը Պոլսոյ մէջ:

Արժանի գնահատականների տուչութիւն եւ Հայաստան Համահայկական Հիմնադրամի ատենապետ՝ պրն. Անդրանիկ Պաղտասարեանի գալիք թելեթոնի շարժառիթի մասին սպառիչ բացատրութիւնները:

Ինչպէս գիտենք «Մասիս»ը ձրիաբար է տրուում ընթերցողին այն ցանկութեամբ՝ որ իւրաքանչիւր տնից ներս հայ թերթ մտնի, հայի ոգով ներշնչելու, ջերմացնելու եւ լուսաւորելու:

Թող որ անխափան ու շողարձակող տեղեկատուութեամբ եւ շաբաթական լուսարձակումով «Մասիս»ը մնայ բոլորի փնտրող թերթը:

Ահա յոբելեանական այս ոգեւորիչ առիթով սրտագին մաղթանքներս առ այն տքնաշուն աշխատանքի, գոր տարուում է թերթի լոյս ընծայման գործում, անսպառ ուժ ու եռանդ այս սրբազան առաքելութիւնը աներկբայ շարունակելու համար: Վարձքներդ կատար:

ԶՕՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ («ՄԱՍԻՍ»Ի 33րդ Տարեդարձին առթիւ) Արման Մանուկեան

Կարօտադրիւր հայրենիք
Չկրցան սպաննել կարօտս,
Չեմ կրնար յաղթահարել կարօտիս:
Ան այնքան գեղեցիկ է եւ այնքան
բարձր կը սաւառնի,
Նոյնիսկ մեր երագներու վերել:
Ան կու գայ դարերու խորերէն,
Ան կը կենդանանայ իւրաքանչիւր սերունդի մէջ:
Այլեւս չեմ կրնար սպաննել կարօտս,
կարօտս կորակոր եւ խաւարած,
կարօտս ընկճուած եւ ջախջախուած
Մինչեւ մերկ սեմեակներու խորը՝
Կը կենդանանայ ի վեր անսպառներու Գողգոթայէն:
Դուն ես երկիրը իմ ծագումիս,
Դուն ես երկիրը իմ արիւնիս,
Երգէ յոյսը վերկանգնած
Երգէ եւ գոռա՛ հայրենիք...
Մանկութեանս հայրենիքը՝ հեռաւոր
Արիւնը արիւնիս կարօտալի
Անուոյ Յայաստան եւ կարօտադրիւր:
(Թարգմանուած ֆրանսերէն բնագրէն)

ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ԽԱՆԴԱԿԱՌ ՏՕՆԱԽՄԲՈՒԹԵԱՄԲ ՆՇՈՒԵՑԱԲ «ՄԱՍԻՍ»Ի ՅՅՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԸ



«ՄԱՍԻՍ» ՇԱԲԱԹԱԹԵՐՈՒ ԸՅՍ ԷՋԸ ԿԸ ՀՈՎԱՆԱԴՐՈՒԻ Ս.Դ.Հ. Կ. «ԱՐՄԵՆ ԿԻՏՈՒՐ» ՄԱՍՆԱԾԻՂԻ ԿՈՂՄԷ

ՃԱՆԱՊԱՐԶ (3 տոլարով կառուցենք 1 սմ.)



ՎԱՀՔՄԵՍՐՈՊԵԱՆ

Ճանապարհները մարդկանց, պետություն համար շատ կարևոր նշանակություն ունեն: Որոշ մարդկանց համար այն ամենօրեայ աշխատանքի գնալու եւ վերադառնալու համար է: Մէկ ուրիշ խմբի համար (արհեստավարժ վարորդներ) աշխատանքային ուղի է: Մէկ այլ խմբի համար՝ ճանապարհորդություններ: Դրանք ամենատարբեր նշանակություն ունեն եւ դրանց որակը, սպասարկումը մարդկանց հաճելի պահեր է պարզեցնում:

Իսկ պետության համար ի՞նչ նշանակություն ունեն: Դրանք նոյնպէս դասակարգում են իրենց նշանակությունները եւ դիպուկ արտայայտությունները՝ «ճանապարհները տուեալ պետության կեանքի երակներն են»: Այո, երակները, որովհետեւ դրանցով է նաեւ որոշում պետության տնտեսական կարողությունները, բնակչության սպասարկելը, ամենատարբեր ապրանքներ եւ մթերքներ տեղափոխելը եւ ժամանակին հասցնելը տնտեսության, բնակչության անխափան գործունէությունը ապահովելու համար:

Երբ Հիտլերը նախապատրաստում էր պատերազմի, առաջին հերթին կարեւորեց, որպէսզի ճանապարհներ կառուցեն, կարգի բերեն, նորոգեն, որ իր մեքենայացուած զորքերը կարողանան արագ տեղափոխել մի ռազմաճակատից միւսը, ապահովի թիկունքի անխափան աշխատանքը:

Առաջիկայ մարտահրաշխաններին դիմակայելու եւ մեր ձեռքբերումները ամրապնդելու համար, կենսական կարեւորություն ունի Վարդենիս-Մարտակերտ ճանապարհի կառուցումը: Դրա տնտեսական նշանակություն, բնակչության կենսագործունէություն, բնականոն զարգացման, տնտեսություն, բնակավայրերի կենսաապահովման համար արժեւորումը կարծում եմ ոչ մէկի մօտ կասկած չի յարուցում: Այն կը նպաստի նաեւ այդ ճանապարհի շրջակայքում ապրող տասնեակ բնակավայրերի վերաբնակեցմանը, բնակչության աճին, գրաստարգրության զարգացմանը, որտեղ առկա են բազմաթիւ հայկական յուշարձաններ:

Այս ճանապարհը կառուցելով, մենք հաստատում ենք նաեւ, որ մենք ազատագրուած տարածքները չենք յանձնելու, ինչքան էլ որ յոխորտան մեր վրայ հարեւանները: Հետաքրքիր է, որ այդ տարածքներում կառուցապատումներ

րի, շինարարությունների համար թուրք ազերիներն այդքան չեն խօսում, բայց ինքնաթիռների թռիչքներն արգելում են, որովհետեւ համարում են, որ դա իրենց օդային տարածքն է: Մեր դիւանագիտությունը այս հարցում կողմ է եւ առաջիկայում էլ չի գտել:

Ինչեւէ ճանապարհի կառուցման արժէքն ըստ հաշուարկների, կազմում է 30 մլն տոլար: Ճանապարհի երկարությունը՝ 115 կմ: Եթէ այդ գումարը բաժանենք աշխարհում ապրող հայերի թուի վրայ, որը կազմում է 10 մլն մարդ, ապա պարզ հաշուարկով, եթէ ամէն մի հայ մարդ մասնակցի Համահայկական հիմնադրամի կազմակերպած թելեթոնին, նրա ներդրումը կը կազմի ընդամէնը \$3 այդ ճանապարհի կառուցման համար: Ուրեմն, եթէ մենք զարգացած, գիտակից ազգ ենք կոչւում, պէտք է համախմբուենք, աշխարհին եւս մէկ անգամ ցոյց տանք մեր հաւատարմութիւնը եւ մասնակցենք թելեթոնին: Մէկ ուրիշ հաշուարկով, ամէն ընտանիքի լուծման այդ ճանապարհի կառուցման համար կազմում է \$10: Փաստօրէն, ամէն հայ մարդ, ըստ հառուստատեսային գովազդի, կառուցում է ճանապարհի 1 սմ հատուած, մուծելով ընդամէնը \$3:

Ձեկուցաբերը նախ նշեց, թէ սրբադասումի հարցով վերջնական որոշում տակաւին չէ առնուած, այլ քննարկումները պիտի շարունակուին յառաջիկայ գարնան, ամբողջացնելու համար կարգ մը կարեւոր ուսումնասիրութիւններ: Մէկ ու կէս միլիոն նահատակներու սրբադասումը ակնյայտօրէն որակելով «հաւաքական», Դոկտ. Աբէլ Քհնյ. Մանուկեան նշեց, որ այդ հոլովոյթի յաջող եզրափակումը մեր հոգեւոր եւ բարոյական պարտքն է: «Սուրբերը պէտք է ըլլան հաւատքով վկայուած անձեր: Հասած պէտք է ըլլան հոգեւոր լուսաւորութեան: Արդեօք ժամանակը չէ՞, որ Յեղասպանութեան ոգեկոչումի աւանդական ձեւերէն անդին անցնելով հասնինք կրօնական ոգեկոչումի աւելի բարձր աստիճանի», հարց տուաւ ան: Ձեկուցաբերը տուաւ Կաթողիկէ եկեղեցու օրինակը, որ «...գրեթէ ամէն օր առնուազն մէկ նոր սուրբ կը յայտարարէ»: Թուելով կարգ մը օրէնքներ, որոնք կրնան խոչընդոտել սրբադասումի հոլովոյթի հեզասահ ամբողջացումը ան նշեց, թէ ժողովրդային պահանջքը աւելի ուժեղ է քան օրէնքը: «Գոյութիւն ունի ժողովրդային պահանջք ընդառաջելու սկզբունքը: Ֆրանչիսկոս պապը սուրբ յայտարարեց Օսմանցիներուն դէմ կռուած 800 իտալացիներու խումբ մը, որ զոհուեցաւ մահմետական չղառնալու համար: Արդեօք հայերը եւս այդպիսի պարտադրանքի առջեւ դրուելով չէին նահատակուած», հարցադրեց Դոկտ. Աբէլ Քհնյ. Մանուկեան: Ան դիտել տուաւ, որ մեր եկեղեցույ մէջ չիշուած սուրբերուն

մեծ մասը օտարազգի են, իսկ հայազգի սուրբերը թիւով միայն 64 են: «Վերջին սրբադասումը տեղի ունեցած է 15-րդ դարուն: 600 տարի անցած է առանց սրբադասումի, հակառակ որ մենք ունեցած ենք բազմաթիւ նահատակներ: Յեղասպանութեան տարիներուն մեր եկեղեցին եւս մարտիրոսացաւ իր զաւակներուն հետ: Սակայն այսօր արդէն ունինք պետութիւն եւ պէտք ունինք նոր սուրբերու: Երջանկայիշատակ Վազգէն Ա. Կաթողիկոս հետաքրքրուած էր այս հարցով, սակայն օրին Հայաստանի պայմանները չէին ներեր: Այսօր անհրաժեշտ է այդ ուղին ամբողջացնել, որովհետեւ մեր նահատակները իրենց կեանքը տուին հաւատքի եւ համոզումներու համար, իսկ քաղաքական այդ հաւաքը անարդարութիւնը պէտք է ունենայ միջազգային ճանաչում եւ փոխ հատուցում», ըսաւ գեկուցաբերը:

Ան ապա թուեց կարգ մը եկեղեցական աստուածաբանական խոչընդոտներ, որոնք կրնան բար-

նեցին, որ Յեղասպանութեան զոհերը սրբադասելով, Մեծ եղեռնի խնդիրը իր մարդկային-քաղաքական տեսադաշտէն կը փոխադրուի գոլտ կրօնականի՝ աղաւաղելով իրականութիւնը: Ուրիշներ նշում կատարեցին իսլամացած հայերու երեւոյթին, որ նոյնպէս ի մտի պէտք է առնուի Յեղասպանութեան զոհերը սրբադասելու հանգրուաններուն ընթացքին:

Ընդհանուր եզրակացութիւնը այն էր, որ մեր նահատակները ինկած են՝ պահպանելու համար իրենց ազգային պատկանելիութեան պատճառով ու պահպանելու համար իրենց ինքնութիւնը, որուն մէջ գլխաւոր բաղադրիչն է քրիստոնէական հաւատքը: Հետեւաբար, մէկ ու կէս միլիոն նահատակներու սրբադասումի հոլովոյթը կը կարօտի խոր եւ մանրակրկիտ քննարկումի՝ արժարժուած տարբեր դիտանկիւններէ, առնելու համար այնպիսի որոշումներ, որոնք թէ՛ արժանիօրէն կը չիշատակեն մեր նահատակները, թէ՛ կը պահպանեն



դացնել սրբադասումի հոլովոյթը, օրինակ՝ բոլոր նահատակներուն մկրտուած շըլլալը, մէկ ու կէս միլիոն զոհերու շարքին հաւանական անհաւատներու, ոճրագործներու եւ հայ այլ յարանուանութիւններու հետեւորդ մեծաթիւ հայորդիներու ներկայութիւնը: Դոկտ. Աբէլ Քհնյ. Մանուկեան նաեւ ներկաներուն հետ զրուցեց սրբադասումի քաղաքական միտումներուն եւ հաւանական վտանգներուն մասին: Ոմանք մտահոգութիւն յայտ-

մեր ազգային արժէքները, թէ՛ հարցին կը մօտենան իրապաշտօրէն, նկատի առնելով արդի աշխարհի հաւասարակշռութիւնները եւ քաղաքական իրականութիւնները:

Հանդիսութեան աւարտին տեղի ունեցաւ Դոկտ. Աբէլ Քհնյ. Մանուկեանի մշակած գիրքի գինեձօնը: Հեղինակին փափաքով, գիրքի վաճառքի ամբողջական հասոյթը տրամադրուեցաւ «Արարատ» օրաթերթի ապագայի ծրագիրներուն:

VA Print Media

Book Printing • Hard Covers • Year Books
Restoration of Old Books & Bibles

Նոր Գիրքերու Տպագրութեան եւ
Հին Գիրքերու Նորոգութեան Համար
Հեռ.աձայնել՝ ՎԱՀԷ ԱՋԱՊԱՀԵԱՆԻՆ



Vahe Atchabachian
1743 E. Elizabeth St. • Pasadena, CA 91104
626-354-5924 • vamedia@yahoo.com
www.vaprintmedia.com

ՆԱՄԱԿ ՌՈՒՄԱՑ ԹԱԳԱԻՈՐԻՆ

(Արձագանք Զօրի Բալայեանի «Ղարաբաղի խնդիրը Ռուսաստանի խնդիրն է. Ռուսաստանի Դաշնութեան նախագահ պարոն Վ. Վ. Պուտինին բաց նամակ» հրատարակմանը)

ՆՈՐԱՅՐ ԱԴԱԼԵԱՆ

Այս վերնագիրը կապ չունի Ակսել Բակունցի նոյնանուն հիանալի պատմուածքի հետ, այլ վերաբերում է Զօրի Բալայեանի «Ղարաբաղի խնդիրը Ռուսաստանի խնդիրն է. Ռուսաստանի Դաշնութեան նախագահ պարոն Վ. Վ. Պուտինին» «Բաց նամակ» հրատարակմանը: Սա կարեւոր ելույթ է, արժանի՝ համազգային ուշադրութեան: Ես այն կարդացի իզմիրլեան բժշկական կենտրոնում՝ ծնկի վիրահատութեան ենթարկուելու յաջորդ օրը, բնականաբար, դեռեւս ցաւ էի զգում, սակայն հաւատացէք, ընթերցելիս ցաւը նկատելիորէն մեղմացաւ, գրեթէ դադարեց, փոխարէնը՝ սրտի ծակոցներ եւ հոգու ցաւալի նուոցը: Այո՛, Զօրիի «Բաց նամակը» նարաւոր է կարդալ անտարբեր սրտով եւ առանց տառապանք ապրելու: Պատկերացնում եմ հեղինակի տառապանքը «Նամակը» շարդրելիս: Հայերիս աւանդական արտաքին քաղաքականութիւնը, որին երբեմն մասնակցել են նաեւ երեւելի գրողներ, ոչ առանց հիմնաւորութեան համեմատել ենք կաթնալից թղթէ շերտիով հարիսա քաշելու փորձի հետ, որ միշտ էլ դարձել է ազգային փորձանք ու ֆիասկօ: Խեղճ ենք եղել այս վճռական ասպարէզում, խոնարհ, կրաւորական՝ անյարիր քաղաքականութեան պոռնիկ խաղի կանոններին: Ազգային գոյապահպանութեան ընթացքում մեզ յաճախ, եթէ ոչ մշտապէս, ուղեկցել են սուտը, կեղծիքն ու անարդարութիւնը, եւ մեր հայրենիքը փոքրացել, կուչ-մուչ է եկել շագրենու կաշուի նման: Այսօր էլ լսում եմ Յովհաննէս Թումանեանի ձայնը.

«Բերանն արնոտ մարդակերը էն անբան, Հազար դարում հազիւ դառաւ մարդասպան: Ձեռքերն արնոտ գնում է նա դեռ կամկար, ու հեռու է մինչեւ մարդը իր ճամբան»: Ծատ հեռու է իր «հերոսական» կացնահարումով: Զօրի Բալայեանի «Բաց նամակը» մեր նորագոյն պատմութեան այն սակաւաթիւ փաստաթղթերից է, որտեղ խօսում է «ազգի սէրը» (Խ. Աբովփան), հայ ժողովրդի աշխարհագրական, հոգեւոր ու բարոյական իրաւունքները բարձրացնելու կամքը՝ համարձակ դիւանագիտութեամբ եւ առանց սեթեւեթանքի: Երկու տող «Բաց նամակի» դիւանագիտութեան մասին: Այստեղ դիւանագիտութիւնը գիտակցաբար թէ՛ ենթագիտակցօրէն ստեղծուած հակադիւանագիտական տեքստն է՝ պարզ, անմիջական, անկեղծ, գրուցային շարադրանք, որի ազդեցութիւնը լայն ընթերցողի վրայ, կարծում եմ, աւելի ծանրակշիռ կարող է լինել, քան կանոնիկ դիւանագիտութիւնը: Զօրին հսկայական պատմական նիւթ է շուռումուռ արել՝ իմանալով շատ աւելին: «Նամակում» երեւում է սառցալեռան դուրսը, ներսում՝ ովկիանոսի խորքում, մեր ժողովրդի եղբրական ճակատագրին առնչուող բազմաթիւ այլ իրողութիւններ եւս կան, բայց այդ դուրսն էլ բաւական է ներկայումս սթափուելու եւ գործնական

հայեացքով քննելու ասպզան, որը սարերի ետեւում է, այլ՝ վաղուայ օր: Կարծում եմ, «Բաց նամակի» գլխաւոր արժանիքներից մէկն այս սթափեցնող ձայնն է՝ ուղղուած հայ ժողովրդին մայր հայրենիքում եւ ի սփիւռս աշխարհի: Ես պատմութիւն սիրող եմ, ոչ արհեստավարժ պատմաբան, առա-

ւել եւս քաղաքագէտ չեմ, այս ասպարէզներին վերաբերում եմ աւելի զգացմունքներով, քան բանականութեամբ, եւ զիտեմ՝ զգացմունքայնութիւնն ի վիճակի չէ գիտականօրէն բացատրուելու երեւոյթի խորքը, հետեւաբար, չեմ համարձակուում յայտնուել «Բաց նամակի» բարդ խաչմերուկներում, այլ մի քանի դիտարկումով յարաբերելու նրան իբրեւ մի շարքային ընթերցող, ով անտարբեր չէ իր պատմական-արդիական ճակատագրի հանդէպ: Արթին պապը նամակ չլեց ուսուց թագաւորին՝ իր աքսորական օրդի Եգորին տուն վերադարձնելու խնդրանքով եւ պատասխան չստացաւ, որը փոքր մարդու անօգնական կեանքից արտածուած՝ Բակունցի գրողական փայլուն պատասխանն էր: Զօրի Բալայեանի՝ այժմեան ուսուց թագաւորին հասցեագրած «Բաց նամակը» ոչ այնքան իր, որքան հայ ժողովրդի անունից է: Նա իրաւունք ունի՝ այս պատասխանատու դերակատարութեանը: Կարծում եմ, ունի՝ Ղարաբաղ հայրենիքի նկատմամբ իր հաւատացեալ սիրոյ շնորհիւ: Նաեւ այն հասարակական նշանաւոր հացաղուից առաջ եւ յետոյ, մինչեւ այս «Բաց նամակի» վերջին վերջակէտը, որը, համոզուած եմ, շարունակութիւն պիտի ունենայ, քանզի գործ ունենք աշխարհի քար սրտի, անհոգի հոգու, կոյր աչքի առջեւ Հայոց ցեղասպանութիւնը, մեր ազգային պահանջատիրութիւնը, Ղարաբաղի հերոսաբար ձեռք բերուած ինքնորոշումը ճանաչելու տեւական շարժումների հետ: Զօրիի գրուածքը բաց կամ փակ նամակ չէ, այլ աւելին, հեղինակն օրերս կայացած հարցազրոյցում այն արդարացիօրէն հրապարակախօսական ժանր համարեց: Նախագահ Պուտինին աւերես դիմելով՝ նա դիմում է ամբողջ Ռուսաստանին եւ միջազգային հանրութեանը, որի

մատն աւանդաբար խառն է հայոց հարցում: Անմիջաբար կը պատասխանի՞ նրանցից որեւէ մէկը, հագիւ թէ, զգուշանալով թուրք-ատրպէյճանական թշնամանքից, ինչպէս բազմիցս եղել է, չէ՞ որ «Ու հեռու է մինչեւ մարդը իր ճամբան»: Նոյնիսկ անպատասխան մնալով՝ Զօրի Բալայեանի «Բաց նամակը» թարգմանաբար լայնօրէն տարածուելու դէպքում, կարծում եմ, այդպէս էլ կը լինի, կը ստանայ լայն ու մեծ արձագանք՝ ի նպաստ հայ դատի, եւ սա էլ է նոր հականարժանիքներից: «Բաց նամակի» փաստագրութիւնն այնքան համոզիչ է, որ այն ի չիք է դարձնում հայերիս ողբերգութիւնների լինել-չլինելը միջազգային յանձնաժողովներով որոշելու ստորամիտ առաջարկութիւնները: Զօրի Բալայեանը թիրախ է ունեցել նման այլ հանգամանքներ եւս: Տարիներ առաջ մի երեւելի պատմաբան գրքոյկ էր տպագրել Խորենացու ժամանակի մասին եւ նրան 5-րդ դարից բերել էր 9-րդ դար: Ես նրան ասացի՝ ախր ինչո՞ւ 9-րդ, երբ ազերիները Նոյնապետին համարում են ատրպէյճանցի: Նա ժպտաց՝ ես գիտնական եմ, փաստեր չունենմ Խորենացու 5-րդ դարի վերաբերեալ: Ասացի՝ ուրիշներն ունեն: Ասաց՝ նրանք ինձ չեն համոզում: Ստիպուած ասացի՝ կան խնդիրներ, որոնք պէտք է լուծել ժողովրդի պատմաբարոյական շահից ելնելով եւ ոչ թէ գիտութեան քարացած քերականութեամբ: Անցան շատ տարիներ եւ Ալբերտ Մուշեղեանը անգլիացի նշանաւոր հայագէտ Ֆրեդերիկ Կոնիբերի նման համոզիչ ու փաստացի ապացուցեց Խորենացու պատկանելիութիւնը 5-րդ դարին: Իհարկէ, ամէն ժողովրդի պատմութիւն հարթագրութիւն չէ եւ երբեմն կարող է այս կամ այլ կերպ բացատրուել, այդ թւում նաեւ մեր անցեալը մեր իսկ կող-

Շար.ք էջ 19

AGBU

ANNUAL GALA BANQUET

Honoring

SAM AND SYLVA SIMONIAN

Founders, TUMO Center of Creative Technologies

Performances by

Ani Christy and Artur Hakobyan (Mister X)
featuring DJ Therapist

Saturday, November 16, 2013

Cocktail Reception 7:00 PM, Dinner 8:30 PM

For more information, please contact
the AGBU Office 626-794-7942
or Hermine Janoyan 818-388-5918

RSVP by Tuesday, November 5, 2013

Tickets: \$250

THE BEVERLY HILTON

9876 Wilshire Boulevard
Beverly Hills, CA 90210

Գրական-Մշակութային ԲՆՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՍՊԵՏՐ

ՇԱՀԷՆ ԽԱՉԱՏՐԵԱՆ

»- Նկարչուքիցը իմ կեանքն է, ապրելակերպս: Ազատութիւնը այդ ձեւի մէջ կը տեսնեմ: Երբ կը նկարեմ, չեմ կարծեր, որ ինձմէ աւելի ազատ մէկը ըլլայ աշխարհի վրայ: Մարդը այդ ազատութեանը պէտք է հետեւի: Կեանքը կը մաքրէ այն ամէնը, որ սուտ է: Արուեստի մէջ կայ մնայուն մի բան, որ տկար գործ չի հանդուրժեր: Եթէ մէկը տաղանդ ունի, բախտ ալ ունի եւ անպայման կը յաջողի: Իսկ մէկը, որ տաղանդ չունի, յաջողելու բախտ կարող է ունենայ, բայց որոշ ժամանակ միայն: Նա կը շարունակէ ապրիլ նկարչութեամբ, նոյնիսկ հոչակ ունենալ, բայց ժամանակի հետ այն ակարտ կ'ունենայ... Նկարչութիւնը ամենից ազատ գործն է, անկաշկանդ ազատութիւն տուող գործ: Ես բախտ եմ ունեցած նուիրուելու նման ազատութեանը: Ժամանակ

Պատերազմի ծանր տարիներէն յետոյ, յատկապէս Ֆրանսիայում, տարածում է ստանում կեանքի բնական իրավիճակից ծնունդ առնող մարդկային տիրութիւնը, ճնշուածութիւնը, միայնութիւնը արտացոլող արուեստի իրապաշտական մի ուղղութիւն: Նոր շարժումի առաջատարներ էին Կրէտմերը, Պիեֆֆէն, Ռեպերոնը, Միլան, Գաուզուն եւ ուրիշներ: Այդ հոսանքը հող է նախապատրաստում եւ երիտասարդ ժանսեմի համար: Նկարիչն ասես գտնում է իրեն, հաւատում սեփական ասելիքի ուժին, նրա համամարդկային բնույթին: Ժանսեմի կեանքում նշանակալից եղաւ նրա ճամբորդութիւնը Յունաստան (1950) եւ Իտալիա (1952-56): Այս երկրներն օգնեցին նկարչին ընդլայնելու իր հետամտած թեմաները, գտնել իրեն մօտիկ մարդկային կերպարներ, իր նախասիրութիւններին արձագանգող կեանքի մթնոլորտ:

1950-ական թուականներից ժանսեմի արուեստը լայն ճանաչում է ձեռք բերում: Նրա ստեղծագործութիւնը պերճախօս վկայութիւնն է սեփական յուզաշխարհին հաւատարիմ մնալու օրէնքին: Արուեստի օրէնքը նման է բնութեան օրէնքին: Ամէն ծառ իր պտուղն ունի: Իսկական արուեստը մարդու հոգեկանի բիւրեղացումն

է, նրա «պտուղը»: Գոյնի, գծի, լուսավորութեան, գունային մակերեսի յուզականութեան, պատկերի կառուցողական բոլոր օրէնքներով ժանսեմի ներաշխարհին սերտօրէն առնչուած են նրա արտայայտչալեզուի ինքնուրոյնութիւնը, սեփական ոճը:

Ժանսեմի ստեղծագործութեան թեման սկիզբ է առնում իր մանկութեան յիշատակներից՝ մայր ժողովրդի մեծ արհաւիրքից: Անցնող ժամանակը արուեստագէտի վրայ նկատելի ազդեցութիւն է չի ունեցել: Նա շարունակել է անընդհատ խորանալ ու կերտել իր տիտուր ու իւրօրինակ աշխարհը:

Վաղ շրջանի կտաւների փոքրիկ հերոսների «դերում» ժանսեմը յաճախ պատկերել է իր գաւազներին: Ներկայացնելով նրանց, նկարիչը խօսել է իր մանկութիւնից, կերպաւորել մեծ փոթորկի շարունակուող ալեծփումը: Այդ մանուկները լինեն տանը թէ փողոցում, միշտ ոտաբոսիկ են, ցնցոտիներ հագած ու միշտ տառապանքի դրոշմը դէմքերին: Ժանսեմը պատկերում է ծեր կանանց՝ խորշոմած դէմքերով: Նրանք նման են իրար ոչ միայն ապրելակերպով, այլեւ դիմագծերով: Կարծես միեւնոյն մարդը պատկերների մէջ բազմանում է, խումբ կազմում եւ ապրում միատեսակ խորհրդաւորութեամբ ու երազանքով: Ժանսեմի պատկերած մայրերը ծանօթ են մեզ: Մեզ հարազատ են նրանց վտիտ մարմինները, տառապանքից կկոցուած աչքերը: Այդ կանայք միշտ կրում են սեւ գլխաշոր: Այդպիսի գլխաշորով կանանց այսօր էլ կարելի է տեսնել խումբ-խումբ, կիրակնօրեայ պատարագի շտապելիս:

Ֆրանսիական տեսաբանութիւնը ժանսեմին բնութագրել է իբրեւ միգրացիոն թշուառների նկարիչ: Ժանսեմի նշանաւոր «Թափօր», «Պարուհիներ», «Յլամարտ», «Դիմակահանդէս» ու այլ նկարաշարերը ներկայացնում են որեւէ գործողութիւն, բայց երբեք չեն պատմում այդ գործողութիւնը: Դիտողի ուշադրութիւնը կլանում է իրենց առօրեայով ու գործով զբաղուած մարդկանց, նրանց շարժումների մէջ խտացած ասելիքը: Արուեստագէտի յոյզերը բացայայտ-

ւում են ինքնօրինակ արտայայտչամիջոցներով: Ժանսեմի կտաւներին առաւելապէս բնորոշ է դեղնականաչ ու զգայաթրթիռ մակերես ունեցող գունային մթնոլորտը, որը սեղ-սեղ լրացւում է կարմիր, կանաչ, նարնջագոյն դրամատիկական հնչեղ գունաբծերով: Լուսային աքորտները սրում են կերպարների արտայայտչականութիւնը, միաժամանակ ստեղծում մութ ու լուսաւոր հատուածներ երգող ներդաշնակութիւն: Ժանսեմի կտաւներում, սակայն, մենաշնորհը գծանկարինն է: Գիծն է, որը դիտողին անմիջապէս առնչում է նկարչի ինքնատիպ վարպետութեանն ու արտայայտչական մեծ ուժին: Մարդկային դալուկ դէմքերի ու աչքերի խորշոմները, նիհար մարմինների ու աղքատիկ հագուստների ներազդող ուրուագծերն ու նրանց ծաւալները ամբողջանում են ժանսեմի պիւրի, մարմնաձեւերը խոր ընդգրկող գծանկարով: Նկարչի կտաւներում գոյնով մի փոքր շեշտադրուած, ջղաձիգ գծերը ասես նրա պատկերների «մարմին» արհեստագործականները լինեն: Երգող գծանկարը ջութակի մենանուագ է ընկալում նկարչի կտաւներում:

Պատկերի մակերեսի կազմակերպման նոյն սկզբունքն է իշխում նատիւրմորտներում եւ բնանկարներում: Այդ ժանրի գործերը վկայում են, որ արուեստագէտը ներգործուն տրամադրութիւն է ստեղծում աչքից յաճախ վրիպող, բնութեան, երբեմն անպասելի, «անշուն» մոտիւններով: Իր այս բնույթի գործերում նկարիչը հասնում է անմեկնելի խորութեան, գեղանկարչական յուզող գեղեցկութեան: Վենետիկում, օրինակ, ժանսեմն իր հոգու ձայնին արձագանգող անպաճոճ, ասես մաշուելով, պերճացած անկիւններ է որոնել: Խորհրդաւոր լոյսը այդ բնանկարներին տալիս է ռոմանթիք հնչողութիւն:

Ժանսեմի վրձինն է պատկանում հիանալի դիմանկարների մի շարք: Կերպարների հոգեկան գծերի բացայայտմամբ հանդերձ, այդ գործերը իրենց տրամադրութեամբ հեռու չեն նկարչի արուեստի գլխաւոր գծից: Նոյնը կարելի է ասել ժանսեմի կրաֆիկական գործերի՝ գունաւոր ու միագոյն լիտոգրաֆիաների ու Սերվանթեսի, Պոտլերի, Ֆրանսուա Վիյոնի, Էրվե Բագենի, Ալպեր Քամիւի, Կարսիա Լորկայի եւ այլ հեղինակների մի շարք գրքերի նկարագրողումների մա-

սին, ուր նկարչի գծանկարային վարպետութիւնը թրթռում է ողջ փայլով:

Ժանսեմի աշխարհը իր հոգու արձագանգն է: Այդ աշխարհը նկարիչը հրամցնում է գեղեցիկի առինքնող լեզուով, խոհական խոր ուժով: Նա ստեղծում է գեղանկարչական մի մթնոլորտ, որի կենսայորդ ուժին անկարելի է դիմադրել: Տարօրինակ զգացումով ես համամիւսնում նրա կտաւների առջեւ: Ժանսեմի հերոսները իրենց հոգեմաշ ու դրամատիկական ծայրայեղ վիճակի մէջ անգամ չեն պարտադրում իրենց վիշտն ու մորմոքը: Յուսահատական ու հիւանդագին զգացմունքներ չունեն: Ներքուստ հարազատ են, արժանապատուութեամբ լեցուն, անտարբեր՝ շրջապատի նկատմամբ: Մտնում ես ժանսեմի աշխարհը, խորանում, եւ քո առաջ բացւում է մի իրականութիւն, որը միայն բանաստեղծական կարելի է կոչել: Նկարչի հերոսները կարծես եւ ապրում են եւ չկան: Նրանք այն չափով են իրական, որ չափով ապրում են նկարչի ներաշխարհում: Թւում է, թէ նկարիչը տեսիլքներ է կերտում ու ձգտում անվրդով պահել նրանց խորիմաստ լուսութիւնը: Ժանսեմի արուեստի այս յատկանիշները բացայայտում են նրա ազգային նկարագրով:

Նոր դարի առաջին տարիներին ժանսեմը ստեղծեց «Հայոց ցեղասպանութիւնը» 34 գործերից բաղկացած նկարաշարը՝ առնչելով այն Մեծ եղեռնի 90-րդ տարելիցին: Հրաբխի նման իր հոգուց յորդած այդ գործերը նա ներկայացնում է Փարիզում, ապա նուիրաբերում Երեւանի հայոց ցեղասպանութեան թանգարանին: Յուզաշունչ իր արտայայտչալեզուի հնչեղ գրոշմը կրող այդ նկարաշարի թեմաները բխել են դաժան արհաւիրքի բոլոր անցած իր մօր պատմութիւններից: Մեր հանդիպումներից մէկի ժամանակ, վերջիջելով այդ նկարաշարի ստեղծման ժամանակները, ժանսեմն ասաց. «Մահուան մղձաւանջ ապրած ժողովուրդ մը չի կրնար կորսնցնել իր հաւատը, իր լեզուն, հոգեւոր կեանքով ապրելու իր ուղին: Մոռնալ ցեղասպանութիւնը, կը նշանակէ մոռնալ սեփական կենսագրութիւնը, կը նշանակէ դադարիլ ազգ մը ըլլալ: Դժոխքով անցած Հայաս-

Շարք էջ 19

INNOVATIVE
 Designs Manufacturing, Inc.
 idmifurnishings.com

ՀԱՅԵՐԷՆԸ ԱՄԵՆԱԳԻՆ ԼԵՁՈ՞ՒՆ Է

ՆԱԶԵԼԻ ՄԱՐԳԱՐԵԱՆ

«... Ձեռագրում որպես հայոց բուն թուական ներկայացուած է մաթեմատիկական ճշգրտութեամբ 3500-ն, այսինքն՝ 6500 թիւը, որը մինչեւ Քրիստոսի ծնունդը Հայ ժողովրդի կողմից գրանցուած, հաշուարկուած տարիների թիւն է: Ըստ պատմական լեզուաբանութեան ուսումնասիրութեան՝ հայոց լեզուի տարիքը 7300 է, հեթիթերէնիներ՝ 8700, թոխարերէնիներ՝ 7900: Եթէ 6500-ին գումարենք եւս 2000 տարի՝ Քրիստոսի ծննդից մինչ այժմ, ապա հայերէնի ճշգրիտ թիւը 8500 է»:

Լեզուների հայրենիքի տեղորոշման, այդ թւում նաեւ հայոց լեզուի հարցը, որ սկիզբ է առել XIX դարում, մինչ օրս շարունակուած է մնալ ոչ միայն լեզուաբանների, այլեւ մարդաբանների ու հոգեբանների ուշադրութեան կենտրոնում:

Այդ կնճռոտ թեմայի շուրջ էլ գրուցեցինք դասախոս, դոցենտ՝ Նազելի Մարգարեանի հետ, ըստ որի՝ ամերիկացի լեզուաբան Մերրիթ Ռուզլինի «Լեզուների ծագումը» (1994) գրքում, որը նուիրուած է հնդեւրոպական լեզուների նախահայրենիքին, մանրամասն քննարկուած է այդ լեզուների նախահայրենիքի բամբասանքները՝ համաշխարհային գենետիկական լաբորատորիաների ուսումնասիրութիւնների արդիւնքների հիման վրայ: «Ըստ այդ ուսումնասիրութիւնների՝ Եւրոպայում եւ Մերձասոր Արեւելքում վերջին 100 տարուայ ընթացքում հնագիտական պեղումների արդիւնքները բացայայտ ցոյց են տալիս, որ առաջին անգամ ամբողջ աշխարհում երկրագործութեան զարգացումն առաջացել է մօտաւորապէս 10 հազար տարի առաջ, հայկական լեռնաշխարհում եւ տարածուել մինչեւ Միջագետք», - ասում է Ն. Մարգարեանը: Դրանք հնագիտական փաստեր են, որոնք ընդունուած են յայտնի գիտական կենտրոնների կողմից:

Ուսումնասիրութեան հեղինակ Ռուզլինը, մանրամասն ու հիմնաւոր եօթ վերլուծութիւններով փաստում է, որ գենետիկ հետազոտութիւնները հիմնաւորում են այն տեսակէտը, որ Փոքր Ասիայի եւ Արեւելեան Անատոլիայի հնագոյն նորագործների գենն է արտագաղթել Եւրոպա: «Տարօրինակն այն է, որ գենետիկական ճշգրիտ գիտական հետազոտութիւնների արդիւնքները, որոնք ներկայացրել է գիտնական, հնագէտ Ռենֆրիտն, անհիմն մերժուեցին, քանի որ դեռեւս 1926 թ. մի շարք գիտնականների՝ Գորդոն Չայլի, Սարիշա Գիմբոլտասի եւ այլոց կողմից ենթադրաբար ընդունուել էր հնդեւրոպական լեզուաբանների նախահայրենիքը Սեւ ծովի հիւսիսային ափին՝ Ուքրանիայում գտնուելու մասին վարկածը», - նշում է գիտնականը եւ յաւելում, որ հետագայ 80 տարիների ընթացքում այդ թեմային առնչուող բազմաթիւ աշխատութիւններ են գրուել, սակայն այդ սխալ տեսութեան հեղինակներից եւ ոչ մէկը դեռեւս որեւէ յայտարարութեամբ հանդէս չի եկել: Նույնիսկ հնդեւրոպական լեզուների մայր լեզուից տրոհման ընդունուած ժամանակը շարժանք՝ Ք.ա 4000-3000 թթ., որեւէ գիտական

հիմք չունի: Այդուհանդերձ, վերջին 20 տարիների լաբորատոր գենետիկական հետազոտութիւններն ապացուցել են, որ հողագործ հնդեւրոպացու գենը Եւրոպա է գաղթել հայկական լեռնաշխարհից առնուազն Ք.ա. 7000-8000 թթ.:

Ն. Մարգարեանի խօսքով՝ Նոր Ձեւանդիայի Օքլենդի համալսարանի հոգեբանութեան ամբիոնի երկու գիտնականներ՝ Ռասսել Դ. Գրեյն ու Քվինտին Դ. Ատկինսոնը, հիմնուելով համեմատական լեզուաբանութեան ուսումնասիրութեան արդէն գործադրուած բոլոր եղանակների վրայ, 2003 թ. համեմատելով 87 հնդեւրոպական լեզուները, հերքում են մինչ այժմ շրջանառութեան մէջ եղած թիւր տեսակէտները: Նրանց գործածած նորագոյն մեթոդը հաստատեց հնդեւրոպական լեզուների տարանջատման ժամանակաշրջանը, որը սկսուած է 7.800-9800 տարի առաջ:

«Այսօր հնդեւրոպական լեզուներով խօսում է երկրագնդի բնակչութեան կէսը: Հայոց լեզուն եւս պատկանում է այդ մեծ լեզուաընտանիքին, սակայն հայերէնն իր զբաղեցրած առանձնապատու տեղով համարում է այդ լեզուաընտանիքի հնագոյն եւ ինքնուրոյն լեզուներից մէկը, - ընդգծում է գիտնականը: - Հնդեւրոպական հնագոյն մշակույթի տարրեր են համարում մարտական անուաւոր կառքը, բրուտագործութիւնը եւ մետաղագործութիւնը»: Հնդեւրոպական տնտեսութեան հիմնական ճիւղը անասնապահութիւնն էր, որտրոգութիւնը, ձկնորսութիւնը, հետագայում նաեւ հողագործութիւնը, իսկ գինեգործութեան (Արեւու քարանձաւի յայտնագործութիւնները, Ք.ա. IV հազարամեակ) հայրենիքը Հայաստանն է:

Մասնագէտը բացատրում է, որ դեռեւս 1970 թ. սկզբին գիտնականներ թ. Գամկրելիձեն եւ Վ. Իվանովը նշել են, որ հնդեւրոպական լեզուների նախահայրենիքը պէտք է տեղադրել Առաջաւոր Ասիայում, յատկապէս Հայկական Բարձրաւանդակում եւ Հիւսիսային Իրանում: Այդ տեսակէտը հիմնաւորելու համար նրանք հիմք են ընդունում հնդեւրոպական եւ հին արեւելեան մշակութային կապը, այնպիսի բոյսերի եւ կենդանիների առկայութիւնը, որոնք տարածուած չեն Հիւսիսում (առիւծ-ինձ, վարդ, խաղող-գինի, նուռ, ցորեն եւ այլն), հնդեւրոպացիների անուաւոր կառքեր ունենալը, որը յատկապէս կապուած էր առաջաւոր Ասիայի՝ Հայկական Բարձրաւանդակի մետաղի մշակութեան հետ եւ խօսում է հնդեւրոպական նախահայրենիքի՝ Կուր-Արաքսեան մշակույթի շրջանի հետ համընկնելու մասին, նշուած տարածքին հին հնդեւրոպացի ժողովուրդների՝ հեթերի, յոյների եւ արիացիների մօտ լինելը, անատոլիական հիզրոնիմայի՝ Ջրանունների եւ տեղանունների հնդեւրոպական բնույթը եւ այլն:

« Գրեյի եւ Ք. Ատկինսոնի կարծիքով՝ լեզուներն ու գենները, որպէս կենսական նյութ, տալիս են անհրաժեշտ տեղեկութիւններ մարդկային պատմութեան մասին: Այդուհանդերձ, հնդեւրոպական լեզուաբանության ծագման գենետիկական ուսումնասիրութիւնները վերջնական արդիւնքների չեն հանգեցրել», - նշում է Ն. Մարգար-

եանը, բայց եւ շարունակում, որ մ.թ.ա. II հազարամեակին հայկական լեռնաշխարհը զգալի չափով բնակեցնում էին նոյն խուռինները, իսկ հիւսիս-արեւմտեան եւ հարաւարեւմտեան ծայրամասերն անմիջականորէն մտնում էին ինթական թագաւորութեան (պատմական Հայաստանի Բարձր եւ ամբողջ Փոքր Հայքը) եւ միտանական թագաւորութիւնների կազմի մէջ: Բացի այդ, անվիճելի է այն, որ մ.թ.ա. II հազարամեակի հենց սկզբին անատոլիական լեզուներն արդէն տարածուած էին, յամենայնդէպս՝ թերակղզու արեւելեան մասում:

« Հայերէնի եւ հեթերէնի առնչութիւնների հարցը գիտնականների ուշադրութիւնը գրաւել է դեռեւս այն ժամանակ, երբ հեթերէնի գիտական ուսումնասիրութեան հիմքերը չէին դրուել եւ հեթերէնը հիերոգլիֆ լեզուից դեռեւս տարբերակուած չէր: Նորվեգացի գիտնական Պ. Ենսենն առաջինը յայտարարեց, որ հեթերը հայերի նախնիներն են: Օրինակ՝ 1905-ին լոյս տեսած Ամոնին նուիրուած հիմների մէջ Hai-t նշանակում է արեւ, լոյս, լուսատու, իսկ 1906-ի բառարաններից մէկում նշանակում է բարձրագոյն քրմական կամ հոգեւոր կոչում», - ասում է մասնագէտը: Յայտնի լեզուաբան Ի. Դիակոնովը նոյնպէս որոշակի անհամարձակութեամբ պաշտպանեց Պ. Ենսենի տեսակէտը: «Ամենայն հաւանականութեամբ, նա չի կարողացել դէմ գնալ խորհրդային ընդունուած տեսակէտին՝ հաշուի առնելով նաեւ այն, որ ՍՍՀՄ ԳԱ-ն հենց նրան էր պատուիրել գրել եւ հիմնաւորել ատրպէյճանցի կոչուող արհեստածին պետութեան եւ ժողովրդի լեզուի մասին: Ուստի


նա յստակ դիրքորոշում չի յայտարարել», - բացատրում է Ն. Մարգարեանը: Ըստ նրա՝ հայ-հեթերէնի մարդաբանութեան տեսակէտի օգտին են խօսում նաեւ XIX-XX դդ. մարդաբանութիւնը եւ գերմանացի մարդաբանների ուսումնասիրութիւնները, որոնք մինչ օրս որեւէ մէկի կողմից չեն հերքուել:

Աւստրիացի բժիշկ-մարդաբան Ֆելիքս Ֆոն Լուշանը, անդրադառնալով հայերին, գրում է, որ չնայած յաճախ փոփոխուող օտարերկրեայ տիրապետողներին՝ հայերի մարմնակազմական առանձնապատկութիւնները զարմանալիօրէն պահպանուել են միատարր, իրենց նախնական գենին հարազատ: Եւ նրանց կարելի է համարել հին ինթերի անմիջական ժառանգորդը, որոնց արտաքինին՝ գլխի եւ դէմքի կառուցուածքին քաջ ծանօթ ենք հին ասորական եւ եգիպտական բարձրավանդակներէ:


«Ինչ վերաբերում է ձայնարկման առաջին բաղաձայն հին, այն կարող է արտացոլել կամ հին հնդեւրոպական p, կամ Hx՝ ձայնարկումները, որոնք անհետացել են համարեա բոլոր աւելի ուշ ձեւաւորուած հնդեւրոպական լեզուների հեթերական խմբում, որին պատկանում են հին հայերի հարեւան հին փոքրասիական ցեղերից շատերը: Այդ երկձայնութիւնն ամենայն հաւանականութեամբ փոխանցում է nti, nte հին համադրութիւնը: Այսինքն՝ հին հայկական «հայ» անուանումը պէտք է վերագրել աւելի հին Իտիին կամ րոտին: Այդ իսկ պատճառով ենթադր-

Շաբ.բ էջ 19

ԳՐԱՅԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ



**Քրեստնքա Հովիտի
Հայաստանեայց Առաքելական
Սուրբ Եկեղեցույ
Կազմակերպութեամբ
Եւ
Հովանաորութեամբ
Գերշ. Տ. Յովնան Արք. Տերտերեանի
Առաջնորդ Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան Թեմի**



**Անուանակոչութեան Պաշտօնական Հանդիսութիւն
Եւ
Յուշարարի Օրհնութիւն**

Բազմավաստակ Կրթական Մշակի Անուան
**«ԵՐՈՒԱՆԳ ՊԱՊԱՅԵԱՆ
ՇԱԲԱԹՕՐԵԱՅ ԳՊՐՈՑ»Ի**

**Յաւարտ Սուրբ Պատարագի
Հանդիսութիւն, Յուշարարի Օրհնութիւն,
Ելոյթ՝ Շաբաթօրեայ Դպրոցի Աշակերտներուն Կողմէ
Հիւրասիրութիւն**

ԿԻՐԱԿԻ, ԱՌՅԵՄԲԵՐ 17, 2013
Armenian Apostolic Church, Crescenta Valley
10154 Mountair Aveune, Tujunga, CA 91042
ՍԻՐԱԼԻՐ ՀՐԱԽԵՐ

ՈՒՏԵԼՈՒ ԴԵՏ ԿԱՊՈՒԱԾ ԱՆՅԱՆԳԱՏՈՒԹԻՒՆՆԵՐՆԵՐՆԵՐ՝ BINGE EATING DISORDER-Ի ՄԱՍԻՆ

Binge Eating Disorder-ը կամ BED-ն այս տարի մաս կազմեց ուտելու հետ կապված անհանգստությունները շարքին: Այս անհանգստությունները, որոնց մաս կը կազմեն նաև Bulimia Nervosa-ն եւ Anorexia Nervosa-ն, կը վատթարացնեն անհատի մը ֆիզիքական եւ հոգեկան առողջությունը:

Binge Eating Disorder-ը ներկայիս կը նկատուի Միացեալ Նահանգներու մէջ ամէնէն շատ ընդհանրացած ուտելու հետ կապուած անհանգստությունները, որմէ տառապող անձերը կարճ ժամանակի մէջ (օրինակ երկու ժամուան ընթացքին) կը սպառեն մեծ քանակութեամբ ուտելիք: Ուտելիք ետք անոնք յաճախ կ'ուռնեն յանցաւորի զգացում եւ կը տառապին նեղությունէ եւ ընկճուածութենէ:

Բոլորս երբեմն կը սպառենք մեծ քանակութեամբ ուտելիք, մանաւանդ տոնական օրերու ընթացքին, սակայն այս մէկը անհանգստություն չէ: Binge Eating Disorder-ի ախտանշաններէն են նաև՝ չափազանց արագ ուտելը, ուտելիքի քանակը սահմանելու կարողութեան թերութիւնը եւ ուտելու հետեւանքով անհաճոյ զգացումները: Այս անհանգստութեամբ տառապող անձերը կրնան օրուան ընթացքին իրենց մարմինը զրկել սնունդէ, սակայն յաճախ կ'ուռնեն վերոյիշեալ ձեւով ուտելու սովորութիւնը, որ կրնայ պատահիլ օրա-

կան կամ շաբաթական դրութեամբ: Այս ձեւով ուտելու յաճախականությունէն է, որ կ'որոշէ անհանգստությունէն լրջութիւնը: Կարեւոր է գիտնալ, որ անոնք կ'ուտեն նոյնիսկ երբ անօթի չեն եւ ուտելիք ետք անհանգստանալու գնով կուշտ կը զգան:

Ըստ մասնագէտ հոգեբաններու, Binge Eating Disorder-ով ախտաճանաչուած մարդիկ ընդհանրապէս գաղտնի կը պահեն իրենց ուտելու սովորությունները նոյնիսկ իրենց ընկերներէն եւ ընտանիքի անդամներէն: Հետեւաբար, որպէս ծնողք կամ ընկեր գիտար է յայտնաբերել անոնց անհանգստությունէն մասին:

Անոնք նաև կը խուսափին դպրոց կամ աշխատանքի յաճախելէ, որպէսզի կարենան կատարել իրենց binge eating-ի սովորությունները: Յոռեզոյն պարագային, մարդիկ նաև կը խուսափին մաս կազմելէ ընկերային հաւաքներու եւ այս մէկը կրնայ ունենալ վտանգաւոր հոգեբանական հետեւանքներ՝ զգացական զեւթի վրայ:

Binge Eating Disorder-է տառապող մարդիկ կրնան ունենալ սովորական կշիռք, սակայն մօտաւորապէս երկու երրորդը նաև կը տառապին չափազանց գիրութենէ կամ obesity-է: Այս անհանգստությունը աւելի հաւանական է կիներու քան տղամարդոց մօտ:

ՀՈԳԵԲԱՆԻ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

Հետաքրքրութիւններ եւ նախասիրութիւններ

Մարդու հոգեբանական առողջութիւնը ուղղակիօրէն կապուած է անոր հետաքրքրութիւններուն եւ նախասիրութիւններուն հետ: Ֆրոյտը շեշտը դնելով «սեռական ուժ»-ի տեսութեան վրայ՝ չանտեսեց եւ ընդունեց ստեղծագործական ու մտաւոր աշխուժութեան կարեւոր դերը մարդկային կեանքին վրայ: Բացատրելով մարդու ստեղծագործելու ձգտումը՝ ան նոյնիսկ մտցուց առանձին հասկացութիւն՝ «սուպրիմացիա»:

Նշեալ հասկացութեամբ Ֆրոյտը կը բացատրէր մարդկային գործունէութեան այն ձեւերը, որոնք տեսանելի կապ չունին սեռականութեան հետ, բայց կը ծագին սեռական համուձէն:

Իբրև «սուպրիմացիա»-ի ակնյայտ ձեւեր՝ ան անդրադարձած է յատկապէս կերպարուեստին եւ գրական գործունէութեան:

«Սուպրիմացիա»-ն Ֆրոյտը կը համարէր լաւագոյն դրական եւ պաշտպանական մեքենականութիւն:

Ֆրոյտէն ետք փոխուած է շատ բան, դարձած են «սեռական ուժ»-ի՝ մարդու կեանքին վրայ ունեցած ազդեցութեան այդքան կարեւորութիւն տալը, բայց մօտեցումը ընդհանրապէս աշխոյժ գործունէութեան դերին մնացած է նոյնը:

Երբ մենք բաւարարուածութիւն կը ստանանք մեր աշխատանքէն, լաւ կը զգանք. բազմազան հետաքրքրությունները միտքը կը պաշտպանեն բացասական մտածումներէն եւ զգացմունքներէն: Յաճախ որեւէ գործունէութեան հանդէպ զարգացած հետաքրքրությունները ի վիճակի է յաղթահարելու ընկճուածութիւնը, թախիծը, գայլոյթը, անհանգստությունը, անսովոր մտահոգութիւնը կամ մեղքի զգացումը:

Այլ մարդոց մէջ ընդհանուր հետաքրքրություններու մեր փնտռումը հիմք է ընտանեկան եւ հասարակական կեանքի:

Բազմակողմանի հետաքրքրություններն ու բազմազան գործունէությունները կ'օգնեն աւելի դիւրին շփուելու շրջապատին հետ: Նոր հետաքրքրություններն ու նախասիրությունները կը բարձրացնեն ինքնայարգանքը, կու տան կենսախնդրութեան եւ լաւատեսութեան զգացում, ինչպէս նաև աւելի կը դիւրացնեն լաւ ընկեր կամ ապագայ կողակից գտնելը:

Ասոր հակառակ՝ քիչ հետաքրքրություններու պարագային հնարաւոր է դիմակալել ընկճուածութիւնը: Վատ է, որ մարդիկ հակուծ ունին պահպանելու հետաքրքրություններու նախկին նեղ շրջանակը՝ այդպիսով սահմանա-

ՀԵՏԱԶՕՏՈՒԹԻՒՆՆԵՐ

Բոլոր գոյգերը կ'ուռնեն հարցեր եւ վիճաբանություններ, սակայն ներկայ արհեստագիտութեամբ այս վիճաբանությունները յաճախ տեղի կ'ուռնեն միջոցով եւ հեռաձայնային նամակներով: Այս գծով վերջերս կատարուած հետազոտությունները ցոյց կու տան թէ բազմաթիւ գոյգեր իրար բջիջային հեռաձայնի նամակներ կ'ուղարկեն վիճաբանութեան պարագային: Սիրային նամակները թիւով աւելի նուազ են քան վիճաբանական խօսքերը, կը շեշտեն ամբերկացի գիտնականները: Այս երեւոյթը կրնայ պատճառ դառնալ որ երկու անձեր զգացականօրէն անջատուին իրարմէ:

Այլ խօսքով, նամակներ, որոնք կապուած են վիճաբանութեան հետ եւ ցոյց կու տան երկու անձերու միջեւ տարբերությունները օգտակար չեն յարաբերություն համար: Bringham Young համալսարանի հետազոտներուն համաձայն ամիսը աւելի քան 170 միլիառ բջիջային նամակներ կ'ուղարկուին Միացեալ Նահանգներու մէջ եւ այդ նամակներուն մեծ մասը կ'ուղարկուի կողակիցներուն: Ըստ գիտնականներուն նամակներուն յաճախականութիւնը եւ բովանդակութիւնը մեծ դեր ունին յարաբերություն մակարդակին մէջ: Այս հետազոտությունէն մաս կազմած են 276 անձեր, որոնք լուրջ յարաբերություն մէջ են:

Արդիւնքներուն համաձայն, տղամարդիկ ամէնէն շատ նամակներ կ'ուղարկէին իրենց կողակիցին երբ յարաբերություն մակարդակը ցած ըլլար: Ի դէպ, այս ուսումնասիրությունէն մասին անդրադարձած է Journal of Couple and Relationship Therapy ամսաթերթը:

Psychological Science ամսաթերթին համաձայն, Harvard եւ Utah համալսարաններու հետազոտական խումբերը կատարած են հետաքրքրական փորձարկումներ հոգեբանութեան ծիրին մէջ: Փորձարկումները կապուած են մարդոց վարմունքներուն հետ: Ըստ արդիւնքներուն մարդիկ սուտ խօսելու, գողնալու եւ խաբէբայութիւն կատարելու աւելի հակամէտ են կէսօրէ ետք քան առաւօտեան: Նա-

խապէս կատարուած ուսումնասիրությունները ցոյց տուած են թէ յոգնությունը, անհանգստությունը եւ յաճախակի որոշումներ առնելու ճնշուածութիւնը կրնան նուազեցնել ինքնակառավարումը:

Միացեալ Թագաւորութեան մէջ գտնուող Oxford-ի եւ Reading-ի համալսարաններու գիտնականները կատարած են ընդարձակ հետազոտություն մը վնասակար ուտելիքներու գիտներուն եւ մարդոց առողջապահական վիճակին գծով: Ըստ այս հետազոտությունէն, արուստական շաքար պարունակող խմիչքներու 20 առ հարիւր համեմատութեամբ գիտներու բարձրացումը կրնայ արդիւնաւէտ միջոց մը դառնալ գիրութեան դէմ պայքարելու համար, յատկապէս 16-էն 29 տարեկան երիտասարդներու պարագային: Գիտնականներուն համաձայն, այս միջոցը կրնայ 1.3 առ հարիւր համեմատութեամբ նուազեցնել Միացեալ Թագաւորութեան մէջ բնակող դէր անձերու թիւը եւ 0.9 առ հարիւր համեմատութեամբ՝ յաւելեալ կշիռք ունեցող անձերու թիւը:

Նշենք, որ 2005-էն 2008 թուականներու ընթացքին կատարուած հետազոտություն մը ցոյց տուած է թէ Միացեալ Նահանգներու բնակիչներուն 50 առ հարիւրը օրական դրութեամբ կը սպառեն արուեստական շաքար պարունակող խմիչքներ եւ այս մէկը կրնայ նպաստել գիրութեան:


Միացեալ Նահանգներու մէջ գտնուող Գալիֆորնիոյ համալսարանի հետազոտություններուն համաձայն՝ մարդիկ աւելի հրապուրիչ են խումբերու մէջ քան երբ առանձին ըլլան: Այս եզրակացութեան հասնելու համար գիտնականներ կատարած են հինգ փորձարկումներ 130 անձերու մասնակցութեամբ: Փորձարկումներէն մէկուն մէջ մասնակիցները պիտի գնահատէին իրենց ներկայացուած նկարներուն մէջ գտնուող դէմքերուն գեղեցկութիւնը: Նոյն դէմքերը աւելի գեղեցիկ գնահատուած էին խմբային նկարներու մէջ: Այս մասին անդրադարձած է Psychological Science ամսաթերթը:

հաճելի ըլլայ»:
Յաճախ անբեւեալ կայելիօրէն դժուար է նոր նախասիրություններ ձեռք բերել ընկճուածութենէն կամ ձանձրոյթէն խուսափելու համար: Յաւօք մենք յաճախ կը մոռնանք՝ ինչը մեզի հաճոյք կը պատ ճառք, ինչը հետաքրքրություններ յառաջացուցած է մեր կեանքին մէջ: Մենակեաց ու ձանձրոյթի մէջ ապրելու սովոր մարդիկ յաճախ կը գերադասեն մոռնալ իրենց համար գուարճալի ու գրաւիչ եղած ամէն ինչ:


փակելով իրենց կեանքն ու շփումները: Միայն լայն մտահորիզոն ունենալով մարդը կրնայ մշտական կենսասիրություն կազմել և ապրիլ, երբ յազեցած են օրերը եւ բազմաճրագիր գործունէությունը:
Բոլոր անոնց, որոնք կը փափաքեն ձեռք բերել կամ զարգացնել նոր ընդունակություններ, պէտք է դիմակալեն բացասական միտքերը ամէն անգամ, երբ անոնք կ'այցնեն: Կրնաք դուք ձեզի ըսել, «ես կը փորձեմ, կրնայ ըլլալ ատիկա ինծի համար իսկապէս

SEROP'S CAFE
GREEK & LEBANESE FOOD
SERVING BATON ROUGE SINCE 1979

533 W. Glenoaks Blvd. Glendale, CA 91202 (818) 240-0065



Dr. Missak Ekmekdjian
Chiropractor



Dr. Anahid Ekmekdjian
Chiropractor

Մեծախառնակներու եւ մտնակներու Բարբաթոսայիթի բուժում:
Գլխացաւ, վզի, մէջքի, յօդային եւ մկանային ցտեղի:
Ինքնաշարժի վնասումներու եւ անբարձր արագութեամբ
վնասուածքներու բուժում:

Ձեր առողջութիւնը մեր մտահոգութիւնն է

ԽՕՍԲ՝ ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԵՒ ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹԵԱՆ

Շարունակում է 1-էն

իր ֆերթուածներով, Տօֆ. Եղիկ ձեռնեանիմ իր հնչակեան հերոսներուն նուիրում մեծագործութիւններով, Յարութ Տէր-Դաւիթեանիմ իր ազգային ու հայրենասիրական վերլուծական էջերով, Մանուէլ Աղամբանիմ՝ գաղափարախօսական վերլուծումներով, Պէպօ Սիմոնեանիմ՝ իր գրական ու տեսական նիւթերով, Դոկտ. Ս. Արէլ Մանուկեանիմ իր հոգեւոր մեկնաբանութիւններով, Երուանդ Պապայեանիմ իր յուշագրական թեմաներով, Թորգոմ Փոստանեանիմ՝ ազգային, հայրենասիրական, գրական, ֆննական եւ ֆննադատական նիւթերով, Սարգիս Վահագնիմ իր գրական եւ վերլուծական մօտեցումներով, Վահան Բահարեանիմ՝ սրտցաւ հայր իր բազմաբնոյթ նիւթերով, Արամ Սեփեթեանիմ իր ազգային, մշակութային եւ ոգեկոչական գրութիւններով, Լիւսի Սիւլահեանիմ, իր մանկա-պատանեկան գրութիւններով, Սահակ Թութեանիմ իր ազգային ու հայրենասիրական ոգիով գրած յօդուածներով, Ռուբէն Քէշիշեանիմ (Ռ. Կորիւն) իր արձակ եւ բանաստեղծական ստեղծագործութիւններով, Հեմրիկ Անասեանիմ իր արձակ եւ երաժշտական յուշագրական սիւնակներով, Պարգեւ Դաւիթեանիմ՝ օրուան ֆաղափական իրադրութիւններու նուիրում անդրադարձներով, Նահապետ Մելգոնեանիմ՝ արձակ ու սաղիմահայ յուշերով, Գրիշ Դաւթեանիմ, եւ Գարուշ Հարեանցիմ բանաստեղծական գրութիւններով, Միմաս Գոնայեանիմ եւ Արա Ահարոնեանիմ, գրական ու գաղութային նիւթերով եւ թղթակցութիւններով, Աւետիս Նազարեանիմ իր յուշագրութիւններով. այո, մեր այն բոլոր աշխատակիցներուն, որոնք իրենց յանձնարարական, մէջբերման կամ

պարբերաբար՝ խնամում, մշակում եւ դիրամատչելի ներհուն յօդուածներով արժեւորեցին եւ վստահաբար պիտի շարունակեն արժեւորել «Մասիս»-ի սիւնակները՝ նպաստելով անոր հաւատարմ հանգանակի պարզաբանման, ընդհանրացման եւ առաջնորդող կոչումի նուիրագործման:

Տարեդարձային այս բարեբաստիկ առիթով, շնորհակալութեան եւ գնահատութեան խօսքով ներկայացնում եմ «Մասիս»-ի հնչակեան մեր դեկավար, մասնաճիւղային, մարզական եւ բարեսիրական այն բոլոր կառոյցներուն, որոնք անհրաժեշտութեան պարագաներուն, նիւթապէս եւ բարոյապէս մեցուկ կանգնեցան ու միշտ պատրաստ են կանգնելու, անոր լոյս ընծայման գործընթացը դիրացնելու համար:

Նոյնպէս, շնորհակալութեան եւ գնահատութեան մասնայատուկ խօսք ունիմ ուղղելիք «Մասիս»-ի 33-րդ տարեդարձի կազմակերպիչ կեդրոնական յանձնախումբին՝ Կարգաւ Գէօրգիւնեանիմ, Կերի Սիմանեանիմ, Լեւա Տէրտեբեանիմ, Ծովիկ եւ Նորա Քէօրօղյանեանիմ, Կարգաւ Գէօրգիւնեանիմ, Կարիմ Տէփոյեանիմ, Կարիմ Գոնայեանեանիմ, Անի Պէֆարեանիմ, Մարիա Թորոսեանիմ, Նայիրի Կարկուտեանիմ Արուսեակ Գրիգորեանիմ, որոնք մէկ ջանքով մեզ յիշեցին յաջողութեամբ պսակելու համար իրենց ստանձնած պատասխանատուութիւնը: Յոգնութիւն, ժամանակ եւ յանձնառութիւն չի խնայեցին երբեք: Արդիւնքը ակնբախ էր. Տարեդարձի նշման որոշումի կատարողական գործընթացը, ակումբային սկիզբէն մինչեւ «Արպաթ»՝ նաշկերոյթ-պարահանդէսի արարական ժամկետը անցան սահուն, բաւարարումութեան ժպիտը բոլորի շրջաններուն:

ՍԻՐԻԱՅՅԵՐԻ ՎԵՐԱԲՆԱԿԵՑՈՒՄՆ ԱՐՅԱՆՈՒՄ

Շարունակում է 5-էն

լու այստեղ:

Իշխանաձոր գիւղի նոր բնակիչ, 1988-ին ծնունդ առնողները դեռ Սիրիայում են: Նա հայերէնին այդքան էլ լաւ չի տիրապետում, Վարդանի խորհրդով եկել է, տրակտորներ ու կոմբայններ է վերանորոգում իշխանաձորի ու շրջակայ գիւղերի համար: Ուզում է մնալ, ամուսնանալ, ընտանիք կազմել: Սիրիա չես գնալու նպատակ չունի, ընդհակառակը՝ ցանկանում է հաստատուել, իր գործում ինչ-որ աստիճանի

հասնել, ապա սպասում է՝ սիրիահայերի համար նախատեսուած բնակարանները կառուցեն, եւ ընտանիքին կը կանչի իր մօտ:

Մեզ տեղաբնակները պատմեցին, որ սիրիահայ ընտանիքները լաւ հողագործներ են, նոյնիսկ փորձում են լիմոն ու կիւփի անցնել Արցախում՝ հայոց հողում: Ականատես լինելով նրանց շփոթմանը տեղացիների հետ՝ հասկացանք, որ պարոն Մխիթարեանի խօսքերը մօտ են իրականութեանը. սա թէ՛ վերաբնակեցման, թէ՛ հայրենադարձութեան գործընթաց է:

ԲՆՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՄՊԵՏԸ

Շարունակում է 16-էն

տանը իմ կեանքիս մաս կը կազմէ: Հայաստանը արիւնխ մէջ է...»: Երբ վերջերս դարձեալ Փարիզում էի, Սենթ Անիենում հանդիպեցի Ժանսեմին, Չերմ, երկար գրոյց ունեցանք: Նա ինձ մի նկար ցոյց տուեց եւ ասաց. «Երեւանում

դու ինձ ցոյց էիր տալիս հայկական եկեղեցիները: Այստեղ ես նկարել եմ Սենթ Անիենի եկեղեցին, այս նկարը քեզ եմ նուիրում»: Խօսեցինք իր լաւագոյն գործերի պատկերագրի հրատարակման շուրջ, պայմանաւորուեցինք, որ դրանց լուսանկարներն ուղարկի ինձ: Յաւոք, չհասցրեց...

ԶՕՐԵԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԶԵՆՆԱՐԿԸ

Շարունակում է 13-էն

ները, որոնք մեր ազգային բարեբեր գործերու եւ նպատակներու ձեռքբերման աշխատանքին կը ներմուծեն իրենց օրհնեալ նպաստը: Եզրակացնելու համար կ'ուզեմ հոս յիշել Պրն. Տեմոյեանի կողմէ յիշուած դէպքը, որ Լոս Անճելըսի մէջ պատահած է, երբ ան հոն կ'այցելէր քանի մը տարի առաջ: Պատահած է, որ Արշալոյս Մարտիկեանի ազգականին տունը այցելած է, հոնկէ վերցնելու համար պատմական արժէք ներկայացնող գիրքեր, ու երբ կը մեկնէր, տնեցիները ետեւէն գալով վերջին պահուն անոր կուտան տուփ մը՝ որ տան

ներքնայարկէն դուրս բերած էին իրեն տալու: Մեծ կ'ըլլայ զարմանքն ու անսահման ուրախութիւնը Պրն. Տեմոյեանի, երբ այդ տուփին մէջ կը գտնէ նամակներ եւ նկարներ Արշալոյս Մարտիկեանի ընտանիքէն, որոնք անփոխարինելի արժէք կը ներկայացնէին մեր հայրենի Յեղասպանութեան թանգարանին համար:

Յորդորն այն է, որ ամէն հայ անցեալէն իրեն մնացած եւ իր տան մէջ աննշան տեղը նետուած ծրար մը կամ տուփ մը դուրս բերէ եւ ստուգէ՝ տեսնելու թէ որքան նման անփոխարինելի արժէք առարկաներ կան հոն, որոնք կրնան փոխանցուիլ Հայկական Յեղասպանութեան թանգարանին:

ՀԱՅԵՐԵՆԸ ԱՄԵՆԱՐԻՆ ԼԵԶՈՒՆ Է

Շարունակում է 17-էն

րու թիւն ենք անում, որ հին հայերի ինքնաստեղծումն եղել է հաթթի, Hxnt(t)i՝ հայ», - կարծիք է յայտնում մասնագէտը, որի համոզմամբ՝ հայ մատենագրութեան մէջ Անանիա Շիրակացին առաջինն էր, որն օգտագործել է նախաքրիստոնէական շրջանից դեռեւս գործածութեան մէջ գտնուող տոմարական անուններ եւ հաշուարկներ, որոնց հիմքում ընկած էր հին հայկական մեհենական տոմարագիտութիւնը: Այդ մասին են վկայում նաեւ հայկական ամսօրերի անունները: Շիրակացին մատնանշում է այն թուաբանական աղիւսակը, որտեղ պարզորոշ երեւում է հայոց բուն թուականը: Ստորեւ ներկայացնում ենք այդ

ձեռագրից մի պատուիկ, որն ապացուցում է գիտական այդ բացայայտումը՝ համոզիչ կերպով հիմնաւորուած Գրեյի եւ Ատկինսոնի կողմից «Այդ ձեռագրում որպէս հայոց բուն թուական ներկայացուած է մասթեմատիկական ճշգրտութեամբ ՅՇ-ն, այսինքն՝ 6500 թիւը, որը մինչեւ Քրիստոսի ծնունդը Հայ ժողովրդի կողմից գրանցուած, հաշուարկուած տարիների թիւն է: Ըստ պատմական լեզուաբանութեան ուսումնասիրութեան՝ հայոց լեզուի տարիքը 7300 է, հեթիթերէնինը՝ 8700, թուարեբէնինը՝ 7900: Եթէ 6500-ին գումարենք եւս 2000 տարի՝ Քրիստոսի ծննդից մինչ այժմ, ապա հայերէնի ճշգրիտ թիւը 8500 է», - եզրափակում է Ն. Մարգարեանը:

Պատրաստեց ԵԼԵՆԱ ԶՈՐԱՆԵԱՆԸ

ՆԱՍԱԿ ՌՈՒՄԱՅ ԹԱԳԱՒՈՐԻՆ

Շարունակում է 15-էն

մից: Զօրի Բալայեանի սոյն հրատարակագրութիւնը որոշ ձեւակերպումների առիթով, ամենայն հաւանականութեամբ, ընդդիմախօսներ կ'ունենայ, մասնաւորաբար, ես համամիտ չեմ Հայաստան աշխարհի պատմական որոշ տարածքների «ուսացման» (իմ բառն է՝ Ն. Ա.) միտումի հետ: Բայց գուցէ սա հեղինակի քաղաքականութիւնն է այսօր եւ այս պահին՝ յնուած արժանաչիշատակ Անատոլի Սոբզակի «Ղարաբաղը աւելի շատ Ռուսաստանի խնդիրն է» հրատարա-

կային կարծիքի վրայ: Ամէն պարագայում անհրաժեշտ է «Բաց նամակին» համախոհութեամբ ու ըմբռնումով մօտենալ: Ինչո՞ւ «Բաց նամակը» գրուեց ու լոյս տեսաւ հենց այս օրերին եւ ոչ երէկ կամ վաղը, երբ դրանում արծարծուած հարցերը շրջանառու են տասնամեակներ շարունակ: Թերեւս այժմ մի պայթիւնավտանգ իրադրութիւն է առաջացել, որը ես չզիտեմ, եւ շատերը տեղեակ չեն: Ենթադրում եմ, որ այս հրատարակումը նպատակամղուած է այդ իրադրութեան կանխարգելմանը կամ վնասագրծմանը:

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly

Enclosed a check for (one year)

* \$50,00 * \$100,00 (first class) for USA

\$ 100,00 (Air Mail) for Canada.

\$ 250,00 (Air Mail) Overseas.

Name: -----

Address: -----

City: ----- State:----- Zip Code:-----

Country: -----

Tel:----- Fax:-----




16th International Armenia Fund

Telethon 2013 | NOVEMBER 28
Thanksgiving Day

Գեախի Արցախի En Route Artsakh

Vardenis-Martakert Highway, strategically linking Artsakh to Armenia from the north has a critical importance for both countries. It is the missing link to fully integrate Armenia's and Artsakh's highway systems and connect Artsakh to Armenia's and subsequently, Europe's railway system. The economic development spurred by the highway has a potential to double Artsakh's GDP by 2020. The highway seriously stimulates creation of jobs in agriculture, manufacturing, tourism and trade.

Վարդենիս-Մարտակերտ ռազմավարական մայրուղին, որը կկապի Արցախը Հայաստանին հյուսիսից, ունի գերկարևոր նշանակություն թե՛ Հայաստանի եւ թե՛ Արցախի համար: Դա շրջախ այն պակասող օղակն է, որը իրար կմիացնի Հայաստանի եւ Արցախի մայրուղիները ամբողջական դարձնելով բեռնատեղափոխման համակարգը: Ավելին, Վարդենիս-Մարտակերտ մայրուղու միջոցով Արցախը կկապվի Հայաստանի եւ, հետեւաբար, Եվրոպայի երկաթուղիներին: Մայրուղին վիթխարի մի թափ կհաղորդի Արցախի գյուղատնտեսությանը, բուրիզմին եւ առևտրին եւ կստեղծի բազում նոր աշխատատեղեր այդ ոլորտներում:



VARDENIS-MARTAKERT
Length 72 miles

Villages along the road
30



Road bridges
16

Construction Warranty
5 years



Վարդենիս-Մարտակերտ Ռազմավարական ճանապարհ 116 կմ եւ \$30 միլիոն ԱՄՆ դոլար


1 Concrete (on the inclines) **16"**



Since the road has to sustain loads of up to 60 tons, concrete footing will be put in the ground on the slopes to make sure the road doesn't slide.

Քանզի ճանապարհով անցնելու են մինչեւ - 60 տոննա քաշ ունեցող մեքենաներ, քերություն ունեցող հատվածներում տեղադրվելու է բետոնի հիմք, որպեսզի ճանապարհը չսահի ներքե:


2 Gravel **6.3"**



Water is the worst enemy of the road as it washes out its foundation. Drainage systems will be installed to prevent water from getting under the road.

Ջուրը անցնելով ասֆալտի տակ, քանդում է ճանապարհի հիմքը: Տեղադրվելու է ջրահեռացման համակարգ, որը անձրեւաջրերն ու ձնհալի ջուրը մեկուսացնելու են ճանապարհից:



3 Coarse **2.4"**



The highway passes through a mountain range. Protection walls will be installed to prevent damage from falling rocks.

Ճանապարհը անցնում է բարձր լեռնային գոտիներով, տեղ-տեղ նաեւ ժայռերի արանքով: Ժայռերից պոկված քարերից մեքենաները պաշտպանելու համար կառուցվելու են պատնեշներ:

4 Fine Asphalt **2"**



Guardrails prevent cars from falling into the gorge in case the driver loses control of the car.

Եթե վարորդը կորցնի մեքենայի կառավարելիությունը, երկաթյա ճաղաչարքը կպաշտպանի մեքենան ձորն ընկնելուց:

Photograph by Erik Stolman/www.enk.org

Call: 1-800-888-8897

Visit & Donate: www.armenianfund.org